



USAID
FROM THE AMERICAN PEOPLE

ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (GAP)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿ
ՇՈՒԿԱՅԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԵՎ
ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ

Ցածր ԱրժանեցոՒնեՐով ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱԶՈՒՐ ԷՆԵՐԳԻԱՅԻ
ՉԱՐԳԱՅՈՒՄ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԵՎ ԵՎՐԱՍԻԱՅՈՒՄ (EC – LEDS PROJECT)

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ AID-OAA-M-15-00005

Հունիս, 2016

ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (GAP)

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿ ՇՈՒԿԱՅԻ

ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԵՎ

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ

Ցածր արտանետումներով արտադրության ռազմավարություն և մաքուր էներգիայի
գարգացում Եվրոպայում և Եվրասիայում (EC – LEDS Project)

Պայմանագիր թիվ՝ AID-OAA-M-15-0000

Հունիս, 2016

ՀՐԱԺԱՐՈՒՄ

Սույն հրապարակման մեջ արձարժված հեղինակի տեսակետները պարտադիր չէ,
որ արտացոլեն ԱՄՆ ՄՁԳ-ի կամ ԱՄՆ Կառավարության տեսակետները:

ԲՈՎԱՆՌԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ՆԱԽԱԲԱՆ	5
2.	ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ	7
3.	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿ ՀԱՄԱԿԱՐԳԸ	11
3.1	Էլեկտրաէներգետիկ համակարգի տեխնիկական ցուցանիշները.....	11
3.2	Ինստիտուցիոնալ շրջանակներ	13
3.3	Էլեկտրաէներգիայի մեծածախ շուկայի կարգավորումը.....	14
3.4	Ներկրման եվ արտահանման կարգավորումը	16
3.5	Սակագների կառուցվածքը	19
3.6	Հետագա զարգացման պլաններ	21
3.7	Հաղորդման ցանցի զարգացման ազդեցությունը միջսահմանային առեվտրի վրա.....	24
4.	ԻՐԱՎԻՃԱԿԸ ՎՐԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ	27
4.1	Ներքին շուկայի սկզբունքները և միջսահմանային առեվտուրը.....	27
4.2	Արտադրության ԵՎ հաղորդման ոլորտների զարգացման ազդեցությունը միջսահմանային առեվտրի վրա.....	29
4.3	Վրաստանի եվ Թուրքիայի միջև առեվտուրը.....	33
4.4	Էլեկտրաէներգիայի առեվտուրը Վրաստանի եվ Ռուսաստանի միջև ...	35
5.	ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՄԻՋԵՎ ԱՌԵՎՏՐԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ	37
5.1	Արտահանում Հայաստանից	37
5.2	Էլեկտրաէներգիայի սեզոնային ներկրումը Վրաստանից և օրական փոխանակումը.....	38
6.	ԵՄ ՊԱՆԱՋՆԵՐԸ ՆԵՐՔԻՆ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՀԱՄԱՐ	39
6.1	Էլեկտրաէներգիա	42
6.2	Կարգավորող մարմին	44
6.3	Վերականգնվող էներգիա	44
6.4	Էներգաարդյունավետություն	46
6.5	Շրջակա միջավայր	46
6.6	Մրցակցություն.....	47
6.7	Վիճակագրություն.....	48
7.	ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (GAP) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	49
8.	ՇՈՒԿԱՅԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԵՎ ՕՐԵՆՍԳՐԱԿԱՆ ԽՈՉՐՆԴՈՏՆԵՐԸ	54
8.1	Օրենսդրական խոչընդոտներ	55
8.2	Շուկայի մարտահրավերները.....	57
8.2.1	Ներքին շուկա	58
8.2.2	միջսահմանային առեվտուր	60
9.	ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	66

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Նկար 1 Հայաստանի միջհամակարգային կապերը	25
Նկար 2 Քուռ գետի ՀԷԿ-երի կասկադի զարգացման ծրագիր.....	33
Նկար 3. Թուրքիայի էլեկտրահաղորդման համակարգը.....	34

ԱՂՅՈՒՄԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

Աղյուսակ 1 Էլեկտրաէներգիայի հաշվեկշռի հիմնական տարեկան տվյալները.....	28
Աղյուսակ 2 Վրաստանի նոր արտադրական հզորությունները.....	30
Աղյուսակ 3 Վրաստանի ներկրումը Ռուսաստանից.....	35
Աղյուսակ 4 Հայաստանի օրենսդրական դաշտի համեմատությունը ԵՄ Ներքին էներգետիկ շուկայի պահանջների հետ Տարբերությունների (GAP) վերլուծություն.....	49
Աղյուսակ 5 Ծուկայի մարտահրավերները և օրենսդրական խոչընդոտները.....	62

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԱՀ	Ավելացված արժեքի հարկ
ԱԷԿ	Ատոմային էլեկտրակայան
ԱՄՆ ՄԶԳ	ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն
ԲԷՑ	Բարձրավորտ էլեկտրական ցանցեր
ԲԸ	Բաշխիչ ընկերություն
ԲՑՕ	Բաշխիչ ցանցի օպերատոր
ԳՎտԺ	Գիգավատ ժամ
ԵՄ	Եվրոպական Միություն
ԵՎՐՈՍՏԱՏ	Եվրամիության վիճակագրական գրասենյակ
ԷԱ	Էներգաարդյունավետություն
ԷԱՎՊ	Էլեկտրաէներգիայի առքուվաճառքի պայմանագիր
ԷԷՀՕ	Էլեկտրաէներգետիկ Համակարգի Օպերատոր
ԷԲՊՆ	ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն
ԽՀԱԱԳ	Խորը և համապարփակ ազատ առևտրային գոտի
ԾԵ	Ծագման Երաշխիք
ՀԱԵ	Հարավ-Արևելյան Եվրոպա
ՀԱՕ	Համակարգի անկախ օպերատոր
ՀԴ	Հայկական դրամ
ՀԷԿ	Հիդրոէլեկտրակայան
ՀՆԽՆ	Հիդրո էլեկտրաէներգիայի ներդրումների խթանման նախագիծ
հյամ	Հազար խորանարդ մետր

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀՆ	Հաստատուն հոսանքի ներդիր
ՀԾԿՀ	ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
ՀՀՕԵՑ	Հաղորդման համակարգի օպերատորների եվրոպական ցանց
ՀՇԳՑԷ	Համակցված շոգեգազային ցիկլով էլեկտրակայան
ՀՑՕ	Հաղորդման ցանցի օպերատոր
ՀՕ	Հաղորդման օպերատոր
ԿԿալ	Կիրկալորիաներ
Կգ	Կիրգրամ
ԿՎ	Կիրովոլտ
ԿՎտժ	Կիրովատժամ
ՎԼ	Վրացական լարի
ՎԷ	Վերականգնվող էներգիայի աղբյուրներ
ՎԷԸԾ	Վերականգնվող էներգետիկայի ընդլայնման ծրագիր
ՎԶՄԲ	Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ
ՎԷԶԿԱՀ	Վրաստանի էներգետիկայի և ջրամատակարարման կարգավորման ազգային հանձնաժողով
մ ³	Խորանարդ մետր
ՄՎԱ	Մեգավոլտ ամպեր
ՄՎտ	Մեգավատ
ՄՎտժ	Մեգավատժամ
ՄՆԴ	Միացյալ Նահանգների դոլար
ՆԾԶԾ	Նվազագույն ծախսերով Հայաստանի էլեկտրաէներգետիկ համակարգի զարգացման ծրագիր
ՇՕ	Շուկայի օպերատոր

ՋԷԿ	Ջերմաէլեկտրակայան
ՓԲԸ	Փակ Բաժնետիրական Ընկերություն
ՓՀ	Փոխըմբռնման հուշագիր
ՖՎ	Ֆոտովոլտաիկ
EC-LEDS	Ցածր արտանետումներով արտադրության ռազմավարություն և մաքուր էներգիայի զարգացում Եվրոպայում և Եվրասիայում
IRG	IRG, էնջինիթի ընկերություն
KfW	KfW զարգացման բանկ
SMART	Specific, Measurable, Assignable, Realistic and Timely

1. ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի էլեկտրաէներգետիկական շուկայի մարտահրավերների և օրենսդրական խոչընդոտների ցանկը ներառող սույն տարբերությունների վերլուծությունը (GAP) պատրաստվել է ԱՄՆ ՄՁԳ-ի Ցածր արտանետումներով արտադրության ռազմավարություն և մաքուր էներգիայի զարգացում Եվրոպայում և Եվրասիայում ծրագրի (EC-LEDS) շրջանակներում Էներջիթի ընկերության տեղական և միջազգային փորձագետների կողմից: EC-LEDS ծրագիրը Հայաստանում նպատակ ունի աջակցելու երկրի էներգետիկ ոլորտի ռազմավարության և շուկայի համապատասխան բարեփոխումների իրագործմանը, ինչպես նաև նպաստելու Վրաստանի հետ միջսահմանային առևտրի զարգացմանը: Նախատեսվում է ձեռնարկել անհրաժեշտ գործողություններ դուրսինացնելու Հայաստանի կարգավորման դաշտի գործելակերպի և էլեկտրաէներգետիկական համակարգի ստանդարտների ներդաշնակեցումը Վրաստանի կարգավորման դաշտի գործելակերպի և ստանդարտների հետ՝ ԵՄ դիրեկտիվներին համապատասխան:

Սույն Հաշվետվության նպատակն է իրականացնել տարբերությունների վերլուծություն և մշակել շուկայի հիմնական մարտահրավերների և օրենսդրական խոչընդոտների ցանկը, դիտարկելով Հայաստանի էլեկտրաէներգետիկական համակարգը: Հաշվետվությունն իրենից ներկայացնում է ՀՀ էներգետիկ համակարգի, արտադրական հզորությունների, շուկայի ներկայիս կառուցվածքի, արտահանման և ներկրման կարգավորման նորմերի, սակագների և սպազա զարգացման ծրագրերի վերլուծություն: Հաղորդման ցանցի զարգացման ազդեցությունը Հայաստանի միջսահմանային առևտրի վրա, ինչպես նաև էլեկտրաէներգիայի հարավային և հյուսիսային միջհամակարգային կապերի ներկա վիճակի և այլ հետագա զարգացումների վերաբերյալ նկատառումները ներկայացված են Հաշվետվության առանձին բաժնում: Հաշվետվությունը ներկայացնում է նաև Վրաստանի էներգետիկ շուկայի վերլուծությունը, կենտրոնանալով հարևան երկրների, մասնավորապես Հայաստանի հետ առևտրային հարաբերությունների վրա:

Էլեկտրաէներգիայի ներքին շուկայի նկատմամբ ԵՄ պահանջներն ընդգրկում են շուկային բնորոշ բոլոր ասպեկտները, ներառյալ՝ շուկայի կանոնները, կարգավորող մարմինը, վերականգնվող էներգիայի աղբյուրների (ՎԷ) հետ կապված խնդիրները, էներգաարդյունավետության (ԷԱ) պահանջները, բնապահպանական հարցերը, տվյալների մշակման և վիճակագրության, ինչպես նաև մրցակցության կանոնները: Սույն Տարբերությունների վերլուծության շրջանակներում ՀՀ օրենսդրական և կարգավորման դաշտը, ինչպես նաև շուկայի կառուցվածքը համեմատվում է ԵՄ ներքին էներգետիկ շուկայի հատկությունների հետ: Շուկայի մարտահրավերները և օրենսդրական խոչընդոտները մանրամասն քննարկվում են ներքին շուկայի և Վրաստանի հետ միջսահմանային առևտրի կտրվածքով: Եզրակացություններ և առաջարկություններ բաժինն անդրադառնում է ռազմավարական մարտահրավերներին, ներկա իրավիճակի վրա փոփոխությունների արդյունքում հնարավոր բացասական ազդեցություններին, էլեկտրաէներգետիկական շուկայի օրենսդրական հիմքերին և խոչընդոտներին: Հաշվետվությունը եզրափակվում է մի շարք առաջարկություններով:

2. ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Սույն Հաշվետվության նպատակն է ուսումնասիրել ՀՀ Էներգետիկ համակարգի օրենսդրության համապատասխանությունը ԵՄ դիրեկտիվների հետ, ինչպես նաև հասկոբոշել շուկայի մարտահրավերները և օրենսդրական խոչընդոտները՝ ներքին էլեկտրաէներգետիկական շուկան և Վրաստանի հետ առևտուրը առաջ մղելու նպատակով: Հայաստանի էլեկտրաէներգետիկական շուկայի ներկա կառուցվածքը ներդրվել է ավելի քան տասը տարի առաջ և Վրաստանի հետ առևտուրը բարելավելու համար անհրաժեշտ օրենսդրական, կարգավորման և շուկայի կանոնների առումով չի բավարարում պահանջվող ստանդարտներին:

Ներքին էլեկտրաէներգետիկական շուկաների գործունեությունը բարելավվելու և կառուցվածքային խնդիրները լուծելու համար ԵՄ-ը սահմանում է էլեկտրաէներգետիկական շուկաների պահանջներ, որոնք ուղղված են ապահովելու շուկայի և ցանցային գործունեության թափանցիկությունը, սպառողների շահերին համապատասխանող մեծածախ և մանրածախ շուկաների մրցունակությունը, բարձրացնելու Հաղորդման ցանցի օպերատորների (ՀՑՕ-ների) միջև միջսահմանային համագործակցությունը և տարանջատելու էլեկտրաէներգիայի մատակարարների ֆունկցիաները ցանցային օպերատորների ֆունկցիաներից: Հայաստանում գործող Էներգետիկայի մասին օրենքը չի համապատասխանում ԵՄ պահանջներին և հստակորեն չի անդրադառնում շուկային և ցանցային գործունեությանը վերաբերող շատ պահանջների: Ավելի բարձր մրցունակության մակարդակ ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ Էներգետիկայի մասին նոր օրենք, որի հիմքում դրված կլինեն ԵՄ դիրեկտիվների սկզբունքները:

Հայաստանի էլեկտրաէներգետիկական շուկան դեռ մրցունակ չէ: Թեև տեղի է ունեցել համակարգի որոշակի ֆունկցիոնալ տարանջատում, այնուամենայնիվ, Հայաստանի էլեկտրաէներգետիկական շուկան շարունակում է ամբողջությամբ մնալ մենաշնորհային՝ «միակ գնորդ» մոդելի կառուցվածքով: Բաշխման ոլորտի Բաշխիչ ցանցի օպերատորի (ԲՑՕ) և Մատակարարի ֆունկցիաները չեն տարանջատվել, այսինքն՝ գործում է միայն մեկ Բաշխիչ ընկերություն և սպառողները չունեն էլեկտրաէներգիայի մատակարարման ընտրություն: Ներկայումս գոյություն չունեն հստակ կանոններ, որոնք կերաշխավորեն երրորդ անձանց մուտքը հաղորդման և բաշխման ցանցեր: Մշակված չեն նաև շուկայի կանոններ բալանսավորելու էլեկտրաէներգիայի պայմանագրային և փաստացի առաքված ծավալների միջև շեղումները: Ամբողջ բալանսավորումը կատարվում է տարեկան կտրվածքով Համակարգի անկախ օպերատորի (ՀԱՕ) կողմից՝ ԲՑՕ-ի համագործակցությամբ: Չկա հստակ կարգավորման մեխանիզմ պաշտպանելու խոցելի սպառողներին, սակայն Հայաստանի կառավարությունը (ՀԿ) կիրառում է տարբեր մոտեցումներ, իրականացնելով այդպիսի սպառողների պաշտպանությանը ուղղված նպատակային և «փորձարկված» սոցիալական ծրագրեր: Բացի այդ, ՀԿ-ի, Էներգետիկայի և բնական պաշառների նախարարության (ԷԲՊՆ) և Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (ՀԾԿՀ) կողմից նոր արտադրական հզորությունների համար թույլտվություն է շնորհվում, որը կարող է պարունակել կոնցեսիաներ: Գոյություն չունի Շուկայի օպերատոր (ՇՕ), քանի որ գործող կանոնակարգերը համակարգված չեն,

որպես Շուկայի կանոններ և Ցանցային կանոնները (Ցանցային օրենսգիրքը) դեռ մշակված չեն:

Ներքին շուկայի ներկայիս կանոնակարգերը, ինչպես նաև ներկրման/արտահանման գործարքների նկատմամբ գործող կարգավորման նորմերը պարունակում են համակարգի արդյունավետ զարգացմանը չնպաստող անտեղի սահմանափակումներ, որոնք ներդրումների համար շուկան դարձնում են նվազ գրավիչ: Ներկրման/արտահանման գործարքները լիցենզավորված են և Կարգավորողը ներկրված էլեկտրաէներգիայի համար սակագներ է սահմանում, թեև արտահանվող էլեկտրաէներգիայի համար գները չեն կարգավորվում: Կարգավորողի կողմից լիցենզիաների շնորհումը իրականացվում է 80 աշխատանքային օրվա ընթացքում: Ներկրողը/Արտահանողը պետք է վճարի մոտավորապես 10 000 ԱՄՆ դոլար տարեկան և ներկայացնի մոտ 1000 ԱՄՆ դոլարի չափով բանկային երաշխիք: Շուկայի կանոնները սահմանված են միայն արտահանման համար և պահանջում են, որպեսզի արտահանողը պայմանագրեր կնքի արտադրողի, Էլեկտրաէներգետիկ համակարգի օպերատորի (ԷԷՀՕ), ՀՅՕ-ի, Հաշվարկային կենտրոնի հետ: Կանոնների առավել կարևոր դրույթը այն է, որ միայն Հրագրանի 5-րդ բլոկը կամ Հրագրանի ՋԷԿ-ը կարող են իրականացնել արտագհանման գործունեություն: Բացի այդ, Կարգավորողը պետք է գրանցի ներկրման/արտահանման պայմանագրերը, ինչը տևում է ևս 10 աշխատանքային օր: Այս կարգավորումները բարդացնում են ներկրման/արտահանման գործարքները և կարգավորման տեսակետից անօգուտ լինելու պատճառով հիմնարար վերանայման կարիք ունեն:

Սակագները կարգավորվում են շահույթի նորմայի հաշվարկման մեթոդորգիայով, որը չի բավարար խթաններ չի ապահովում՝ կարգավորվող մենաշնորհների ծախսերը օպտիմալացնելու համար: Բաշխման սակագները սահմանված չեն: Համապատասխան իրավական շրջանակների բացակայությունը արեստականորեն սահմանափակում է սպառողի՝ հարևան երկրներից էլեկտրաէներգիա ներկրելու իրավունքը: Վերջնական սպառողի սակագները տարբերակվում են ըստ լարման մակարդակների, ցերեկային և գիշերային ժամերի : Սահմանված չեն հզորության դիմաց վճարներ, պիկային սակագներ կամ ծառայության վճարներ: Արդյունքում, սպառողները պատասխանատվություն չեն կրում խոշոր արտադրողների համար սահմանված հզորության վճարների նկատմամբ: Ցերեկային և գիշերային սակագների միջին տարբերությունը բարձր լարման (110 կՎ, 35 կՎ) սպառողների համար կազմում է ընդամենը 12%, իսկ միջին (6/10 կՎ) և ցածր լարման (0.4(0.22) կՎ) սպառողների համար այն կազմում է 26%: Այս տարբերությունները չեն նպաստում բեռի կառավարման բարելավմանը:

Հայկական ատոմակայանի (ՀԱԷԿ) վերականգման, նոր համակցված շոգեգազային ցիկլով էլեկտրակայանների (ՀՇԳՑԷ) և հիդրոկայանների (ՀԷԿ) կառուցման, հաղորդման ցանցի ուժեղացման հետ կապված հետագա զարգացման պլանները կստեղծեն նոր մարտահրավերներ և հնարավորություններ Հայաստանի էլեկտրաէներգետիկական շուկայի համար: Շուկայի աստիճանական ազատականացումը և Վրաստանի հետ առևտուր իրականացնելու նոր մեխանիզմները կարող են օգնել հաղթահարելու առաջիկա մարտահրավերները:

Վրաստանը ստորագրել է Խորը և համապարփակ ազատ առևտրային գոտու (ԽՀԱԱԳ) և Ասոցացման համաձայնագրեր ԵՄ-ի հետ և փոփոխում է իր ներքին

կանոնակարգերը ԵՄ չափանիշներին համապատասխան: Այդ առումով մշակվել է շուկայի բացման իրականացման պլան և ստեղծվել է պատշաճ շուկայի կառուցվածք:

Հայաստանն ու Վրաստանը կարող են բարձրացնել ներքին շուկաների արդյունավետությունը, եթե մշակեն առևտրի և ինտեգրման պատշաճ մեխանիզմներ, ինչի շնորհիվ կնվազեն մի շարք խնդիրներ, որոնք սովորաբար առաջանում են անցումային տնտեսություն ունեցող երկրներում: Հայաստանն ու Վրաստանը զարգացնում են անհրաժեշտ միջհամակարգային ենթակառուցվածք, որը կնպաստի երկրների միջև առևտրի զարգացմանը: Առևտրից ստացած օգուտները առավելագույնի հասցնելու համար Հայաստանում անհրաժեշտ է իրականացնել հետևյալ բարեփոխումները:

- Ներքին սպառողների շահերի պաշտպանություն՝ (1) գնային համակարգի մոդիֆիկացիաների և (2) պատասխանատվությունը շուկայի մասնակցի և վերջնական սպառողի միջև բաշխելու միջոցով
- Պատասխանատվության արդար բաշխում շուկայի մասնակիցների միջև
- Մասնավոր ներդրողների համար ավելի գրավիչ պայմանների առկայություն
- Ծահավետ միջսահմանային առևտուր ունենալու համար հնարավորությունների ընդլայնում:

Նախնական փուլում շատ կարևոր է դիտարկել հետևյալ անհրաժեշտ փոփոխությունները. (1) սակագնի հաստատման նոր համակարգ, (2) անցում ժամային շուկա, (3) երկարաժամկետ և կարճաժամկետ բալանսավորման գործարքներ, (4) թափանցիկ և անկողմնակալ էլեկտրաէներգետիկական շուկաների ստեղծում և (5) ավելի խիստ համապատասխանություն իրական սպառման աճի և միջսահմանային հնարավորությունների ու ներդրումների միջև: Անհրաժեշտ է աստիճանական անցում դեպի նոր շուկա, ինչը մանրամասն կքննարկվի *Հայաստանի նոր էլեկտրաէներգետիկական շուկայի նախնական կառուցվածքը և տարածաշրջանային առևտրի զարգացմանը նպաստող գործողությունների ծրագիրը* հաշվետվության շրջանակներում:

Հաշվի առնելով, որ մեծածախ և մանրածախ մատակարարման համակարգում *Էներգետիկ Համայնքի համաձայնագրի*, ինչպես նաև էներգետիկ ինտեգրման գործընթացի շրջանակներում մրցակցությունը հանդիսանում է կարևորագույն հատկանիշ, զարմանալի չէ, որ Հայաստանի էներգետիկ համակարգն ի վիճակի չէ բավարարելու այդ պահանջները: Նշվածը հստակ ներկայացվում է Տարբերությունների (GAP) վերլուծությունում, որտեղ Հայաստանի էներգետիկ օրենսդրությունը/օրենսդրական դաշտը և շուկայի կառուցվածքը համեմատվում է Էներգետիկ Համայնքի Զարտուղարության գնահատման չափանիշների հետ:

Բոլոր նշված գործոնների ազդեցության արդյունքում ՀՀ էներգետիկ համակարգը հանդիպում է բազմաթիվ մարտահրավերների, ներառյալ պահանջարկի աճը և ոչ արդյունավետ շուկայի առկայությունը և սակագնի կառուցվածքը: Վրաստանի հետ առևտրի հնարավորությունները կարող են տալ նոր օգուտներ և արդյունավետորեն անդրադառնալ Հայաստանի էլեկտրաէներգետիկական համակարգի մարտահրավերներին:

Ներքին էլեկտրաէներգետիկական շուկան և օրենսդրական դաշտը ձևափոխելու և Վրաստանի հետ համապատասխանեցնելու համակարգված մոտեցումը Հայաստանին կտա լրացուցիչ օգուտներ: Այս առումով, առաջարկվում է «Վերբեռնել

Էլեկտրաէներգետիկական Շուկան», ստեղծել նոր մոդել՝ մշակելով շուկայի նոր կառուցվածքն այնպես, որ մրցակցության առումով այն աստիճանաբար դառնա հասանելի՝ «կարգավորվող» համակարգից անցում կատարելով «ապակարգավորվող» համակարգի՝ հիմնվելով կարգավորման խթանիչ գործիքների վրա: Հետևյալ գործողությունները, որպես հիմնական քայլեր, առաջարկվում է վաղ իրականացման համար.

- Սահմանել բաշխման սակագներ, որպես շուկայի բացման նախապայման, նույնիսկ շատ փոքրաքանակ սպառողների համար
- Ստեղծել Շուկայի օպերատոր, որը պատասխանատու կլինի պատշաճ առևտրի մեխանիզմների կազմակերպման համար ներքին և տարածաշրջանային շուկաներում: Շուկայի օպերատորի լիարժեք անկախությունը ապահովելու և որոշումներ կայացնելու անկողմնակալությունը և թափանցիկությունը ամրապնդելու համար ՀԿ-ն կարող է իր բաժնետոմսերը ուղղակիորեն փոխանցել շուկայի մասնակիցներին:
- Տարանջատել բաշխումը մատակարարումից և մշակել տարբերակվող կարգավորումներ այս ոլորտների համար
- Պարզեցնել արտահանման և ներկրման կանոնները
- Մշակել Ցանցային կանոններ և սահմանել շուկայի բարեփոխումների իրականացման անցումային փուլեր:

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿ ՀԱՄԱԿԱՐԳԸ

3.1 ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻԾՆԵՐԸ

Հայաստանի էլեկտրաէներգետիկ համակարգում տեղի է ունեցել ֆունկցիաների հիմնական տարանջատում, մասնավորեցում և առևտրայնացում: Էլեկտրաէներգիայի արտադրությունը, որը կազմում է տարեկան շուրջ 6500¹ ԳՎտժ միջին տարեկան 2.0% աճի ցուցանիշով, բավարարում է ներքին պահանջարկը: Արտադրական հզորությունները կազմված են հետևյալ էլեկտրակայաններից²³.

▪ Ատոմային էլեկտրակայաններ

Հայկական ԱԷԿ – պետական էլեկտրակայան է («ՀԱԷԿ» ՓԲԸ), աշխատանքային հզորությունը 385 ՄՎտ (տեղակայված հզորությունը 440 ՄՎտ, շահագործման հանձնելու տարին՝ 1980): Տարեկան արտադրանքը կազմում է մոտ 2400 ԳՎտժ, բավարարում է ներքին շուկայի կողմից սպառվող էլեկտրաէներգիայի 37%-ը: 2017-2018 թթ. նախատեսվում է վերանորոգել Հայկական ԱԷԿ-ը՝ շահագործման ժամկետը 10 տարով երկարաձգելու նպատակով: Վերականգնման ծախսերը կազմում են 300 միլիոն ԱՄՆ դոլար:

▪ Ջերմային էլեկտրակայաններ

Հրազդան ՋԷԿ – մասնավորեցված է («ՀրազՋԷԿ» ՓԲԸ), աշխատանքային հզորությունը 400 ՄՎտ (տեղակայված հզորությունը 1110 ՄՎտ, շահագործման հանձնելու տարիներն են 1966-1974թթ.), ներքին շուկայի համար տարեկան արտադրանքը կազմում է մոտ 500 ԳՎտժ, որը բավարարում է ներքին պահանջարկի մոտ 8%-ը: 2019 թ. նախատեսվում է հանել շահագործումից ցածր արդյունավետության պատճառով:

Հրազդան ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկ – մասնավորեցված է («Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ), աշխատանքային հզորությունը 440 ՄՎտ (տեղակայված հզորությունը 467 ՄՎտ, շահագործման հանձնելու տարին 2011թ.), ներքին շուկայի համար տարեկան արտադրանքը կազմում է մոտ 500 ԳՎտժ, որը բավարարում է ներքին պահանջարկի մոտ 8%-ը: Էներգաբլոկի տարեկան նախագծային արտադրանքը կազմում է մոտ 3000 ԳՎտժ,

¹ Հաշվետվության մեջ ներկայացված տվյալները վերջին տարիների միջինացված ցուցանիշներ են:

² <http://www.minenergy.am/>

³ <http://www.psrc.am/am/sectors/electric>

ինչը նշանակում է, որ ներքին շուկայում սպառվում է այդ ծավալի ընդամենը 17%-ը: Ներկայումս էներգաբլոկը առավել կենտրոնացած է էլեկտրաէներգիա արտահանելու վրա:

Երևանի ՀՇԳՑԷ – պետական էլեկտրակայան է («Երևանի ՋԷԿ» ՓԲԸ), աշխատանքային հզորությունը 220 ՄՎտ (ընդհանուր հզորությունը 238 ՄՎտ, շահագործման հանձնելու տարին 2010թ.), ներքին շուկայի համար տարեկան արտադրանքը կազմում է մոտ 950 ԳՎտժ, որը բավարարում է ներքին պահանջարկի մոտ 15%-ը: Երևանի ՀՇԳՑԷ-ն աշխատում է «գազ-էլեկտրաէներգիա» փոխանակման պայմանագրով, տարեկան արտահանելով մոտ 500 ԳՎտժ:

▪ **Մեծ հիդրոէլեկտրակայաններ**

Որոտան կասկադ – մասնավորեցված է («Կոնտուր Գլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ), աշխատանքային հզորությունը 404 ՄՎտ (ընդհանուր հզորությունը 404 ՄՎտ, շահագործման հանձնելու տարիներն են 1970-1989), տարեկան արտադրանքը կազմում է մոտ 1000 ԳՎտժ, որը բավարարում է ներքին պահանջարկի մոտ 15%-ը: Որոտան կասկադի ակտիվները հին են և ծավալուն արդիականացում են պահանջում: 51 միլիոն եվրո արժողությամբ վերականգնողական կարճաժամկետ ծրագիրը ներկա պահին մշակման փուլում է:

Սևան-Հրազդան կասկադ – մասնավորեցված է («ՄԷԿ» ՓԲԸ), աշխատանքային հզորությունը 552 ՄՎտ (ընդհանուր հզորությունը 561 ՄՎտ, շահագործման հանձնելու տարիներն են 1940-1962), տարեկան արտադրանքը կազմում է մոտ 450 ԳՎտժ, որը բավարարում է ներքին պահանջարկի մոտ 6%-ը: Արդիականացման տարբեր ծրագրեր են իրականացվել կասկադի էլեկտրակայաններում վերջին 15 տարվա ընթացքում: Ներկայումս, Երևան ՀԷԿ-ում վերանորոգման աշխատանքներ են իրականացվում, որոնց ներդրումային արժեքը կազմում է 40 միլիոն ԱՄՆ դոլար:

▪ **Վերականգնվող էներգիայի աղբյուրներ**

Այս ոլորտում աշխատում են մոտ 170 մասնավոր փոքր (մինչև 30 ՄՎտ) ՀԷԿ-եր:

Դրանք հիմնականում կառուցվել են վերջին 10 տարվա ընթացքում: Ընդհանուր հզորությունը կազմում է 300 ՄՎտ, տարեկան արտադրանքը մոտ 700 ԳՎտժ, որը բավարարում է ներքին պահանջարկի մոտ 11%-ը: Համակարգում գործում են նաև փոքր չափի հողմային, արևային և կենսակայաններ, որոնք մեծ դեր չեն խաղում:

Հայաստանի հաղորդման ցանցը բավականին զարգացած է և ներկայացված է 220կՎ 14 ենթակայաններով և 110կՎ երկու ենթակայանով (ընդհանուր թվով 33 տրանսֆորմատոր 2500 ՄՎԱ հզորությամբ), որոնք հիմնականում վերականգնվել են վերջին 10 տարվա ընթացքում կամ կամ նախատեսվում է վերականգնել առաջիկայում: Ցանցը ունի միջհամակարգային գծեր Վրաստանի (110կՎ և 220կՎ, կղզիացած աշխատանքի ռեժիմ), Իրանի (220 կՎ, սինքրոն աշխատանքի ռեժիմ) և Թուրքիայի հետ (220 կՎ, չի շահագործվում): Վրաստանի հետ միջհամակարգային կապերի հզորությունը 200 ՄՎտ է, իսկ Իրանի հետ՝ 300 ՄՎտ: Հաղորդման ցանցի կորուստները կազմում են 1.8%: Հաղորդման օպերատորը («Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ) պետական ընկերություն է, որին պատկանում են հանրապետությունում գտնվող հաղորդման ցանցի ակտիվները: Դրանց կառավարման լիազորությունը ընկերությունը չունի:

Բաշխիչ ցանցը ներկայացված է 0.4-110 կՎ գծերով և տրանսֆորմատորներով: Բաշխիչ ցանցին մուտքի հնարավորությունը շուրջ 100% է: Բաշխիչ ցանցի օպերատորը սպասարկում է մոտ մեկ միլիոն սպառող և տրամադրում նաև «վերջին հատվածի» (ներշենքային հատված) սպասարկման ծառայություններ: Բնակչության տարեկան սպառումը կազմում է 35%, խոշոր սպառողները (արդյունաբերություն, տրանսպորտ, ջրամատակարարում և ոռոգման համակարգ) մոտ 30%, իսկ մնացած 35%-ը կազմում է հանրային ընկերությունների և փոքր ու միջին չափի ձեռնարկատիրությունների սպառումը: Բաշխիչ ցանցի կորուստները մոտ 11.0 % է, առևտրային հաշվառումը և գումարների հավաքագրումը գրեթե 100%: 35-110 կՎ ցանցի բոլոր սպառողները և 6-10 կՎ ցանցի սպառողների մեծ մասը ընդգրկված են տվյալների հավաքագրման համակարգում, սպառողների 30 %-ի մոտ տեղադրված են էլեկտրոնային հաշվիչներ: 2014 թ. Համակարգի ընդհատման միջին տևողության ինդեքսը կազմել է 8.81 ժամ, Համակարգի ընդհատման միջին հաճախականության ինդեքսով գրանցվել է 5.48 անջատում մեկ սպառողի հաշվով, իսկ Սպառողի ընդհատման միջին տևողության ինդեքսը կազմել է 1.61 ժամ: Բաշխիչ ցանցի օպերատորը մասնավոր ընկերություն է («Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ), որին պատկանում են և որը շահագործում է երկրի ներսում գտնվող բաշխման ակտիվները:

Էլեկտրաէներգետիկական համակարգի կարգավարումը իրականացնում է պետությանը պատկանող Համակարգի անկախ օպերատորը՝ ՀԱՕ («Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ): Վերջին տարիների ընթացքում արտադրական կայաններում և 220 կՎ ենթակայաններում տեղադրվել է տվյալների հավաքագրման և կարգավարական կառավարման (SCADA) համակարգը:

Հաշվարկային կենտրոնը մատուցում է հաշվառման և հաշիվների ներկայացման ծառայություններ մեծածախ շուկայի մասնակիցներին: ԱՄՆ ՄՁԳ-ի ֆինանսավորմամբ 2001թ. Հաշվարկային կենտրոնում տեղադրված տվյալների հավաքագրման համակարգը հնարավորություն է տալիս հաշիվների ներկայացման նպատակով հավաքագրել մեծածախ էլեկտրոնային հաշվիչների տվյալները՝ 30 րոպե միջակայքների համար:

3.2 ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ

Հայաստանի էլեկտրաէներգետիկական համակարգը կարգավորվում է 2001թ. ընդունված Էներգետիկայի մասին օրենքով: Էներգետիկայի մասին օրենքում ամրագրված են ազգային քաղաքականության հիմնական սկզբունքները, սակայն մատնանշված չեն ՀՀ կառավարության կամ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության իրավասությունները այդ քաղաքականությունը իրագործելու համար, ինչպես նաև ԷԲՊՆ-ի դերը էներգետիկ բնագավառում: Մինևույն ժամանակ օրենքը մանրամասն նկարագրում է Հանրային ծարայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ ՀԾԿՀ) իրավասությունները, որոնք, ընդհանուր առմամբ համապատասխանում են լավագույն միջազգային փորձին: Հանձնաժողովը⁴.

⁴<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=91484>

- Տրամադրում է լիցենզիաներ մեծածախ շուկայի մասնակիցներին, ներառյալ ներկրման և արտահանման համար,
- Սահմանում է էլեկտրաէներգիայի արտադրության, հաղորդման և բաշխման սակագները, ներառյալ սպառողների սակագները և Համակարգի օպերատորի ու Հաշվարկային կենտրոնի ծառայությունների դիմաց վճարները, ինչպես նաև էլեկտրաէներգիայի ներկրման սակագները,
- Սահմանում է շուկայի կանոնները, համագործակցելով Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության հետ,
- Սահմանում է բաշխման կանոնները, ներառյալ ցանցի միացման կանոնները:

Էներգետիկայի մասին օրենքը չի համապատասխանում Եվրամիության պահանջներին: Ներքին էներգետիկ շուկայի գործունեությունը բարելավելու և կառուցվածքի հետ կապված խնդիրները լուծելու նպատակով Երամիությունը սահմանում է էներգետիկ շուկային ներկայացվող հիմնական պահանջները, որոնք, ի թիվս մյուսների, հետևյալն են.

- Թափանցիկ շուկա և ցանցային կանոններ
- Մրցունակ էլեկտրաէներգիա և մանրածախ շուկա՝ հոգուտ սպառողների
- ՀՅՕ-ների միջև միջսահմանային համագործակցություն
- Էներգամատակարարների տարանջատում ցանցային օպերատորներից⁵:

Այս պահանջներից և ոչ մեկը ընդգրկված չէ ՀՀ Էներգետիկայի մասին օրենքում, ուստի այն պետք է հիմնովին վերանայել: Եվրամիության հրահանգների սկզբունքների վրա հիմնված նոր էներգետիկայի մասին օրենքը ընդունակ կլինի ուղղորդել բնագավառը դեպի մրցունակ շուկա:

3.3 ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՄԵԾԱԾԱԽ ՇՈՒԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Հայաստանի էլեկտրաէներգիայի մեծածախ շուկան չունի մրցակցության հատկանիշներ, այն ամբողջությամբ կարգավորվում է և ենթարկված է տարբեր սահմանափակումների: Միայն իրավաբանական անձինք կարող են մասնակցել էներգետիկայի բնագավառի գործարքներում: Արտադրության, հաղորդման և բաշխման և այլ գործառույթների տարանջատումը պահանջվում է օրենքով⁴: Չի մշակվել որևէ համապարփակ փաստաթուղթ շուկայի կանոնների վերաբերյալ, կան միայն Հանձնաժողովի կողմից ընդունված որոշ կանոնակարգեր: Դեռ չի ընդունվել նաև Ցանցային օրենսգիրքը, թեև մեծ ջանքեր են ներդրվել այն մշակելու գործում:

Մեծածախ շուկայի կարգավորումը.

⁵ <https://ec.europa.eu/energy/en/topics/markets-and-consumers/market-legislation>

- Արտադրության ոլորտը** ամբողջությամբ կարգավորվում է, չունի մրցակցության պայմաններ: Կարգավորողը տրամադրում է մեկ լիցենզիա կառուցման և շահագործման համար և սահմանում սակագին: Արտադրող կայանները չունեն սպառողներին էլեկտրաէներգիա վաճառելու իրավունք: Արտադրողը կարող է էլեկտրաէներգիա արտահանել միայն այն դեպքում, երբ ներքին շուկայի կարիքները լիովին բավարարված են և դա չի հակասում ներքին սպառողների շահերին: Բացի այդ, ինչպես նշված է Էներգետիկայի մասին ՀՀ օրենքում, միայն ամենաթանկարժեք էլեկտրաէներգիան կարող է արտահանվել, ինչը նշանակում է, որ Հրազդան ՁԷԿ-ը և Հրազդան 5-ը արտահանման հնարավորություն ունեցող միակ էներգաբլոկներն են:

Հարկ է նշել, որ արտադրված էլեկտրաէներգիայի չափը Արտադրողի և Բաշխիչ ցանցի օպերատորի (ԲՅՕ) միջև կնքված պայմանագրերում սահմանված է որպես «նախնական չափաքանակներ»⁶, այսինքն, Արտադրողը պատասխանատու չէ «պայմանագրային» էլեկտրաէներգիայի չափաքանակների համար:
- Հաղորդման ոլորտը** լիովին կարգավորվում է: Հանձնաժողովը Հաղորդման օպերատորին տրամադրում է կառուցման և ակտիվների կառավարման մեկ լիցենզիա: Սահմանված չեն երրորդ կողմի՝ հաղորդման ցանց ոչ խտրական սկզբունքով մուտքի իրավունք ստանալու կանոնները:
- Բաշխման ոլորտը** լիովին կարգավորվում է: Հանձնաժողովը տրամադրում է մեկ լիցենզիա կառուցման և շահագործման համար: Սպառողներին էլեկտրաէներգիա մատակարարելու բացառիկ իրավունքը մինչ 2016 թվականի փետրվար ամիսը պատկանել է բաշխիչ ընկերությանը: Բաշխումը մատակարարումից անջատելու հստակ կանոնակարգեր դեռ չեն մշակվել: Փաստորեն, բաշխիչ ընկերությունը միակ մատակարարն է և գործում է որպես մենաշնորհ: ԲՅՕ-ն էլեկտրաէներգիան գնում է արտադրող պետական ընկերություններից՝ կարգավորվող գներով և ուղիղ պայմանագրերով: Հետևաբար, մեծածախ շուկան մոնոպսոն արտահայտում ունի, որտեղ ԲՅՕ-ն գործում է որպես միակ գնորդ: Հանձնաժողովը չի սահմանել բաշխման սակագները: Այս փաստը թույլ չի տալիս, որպեսզի սպառողները էլեկտրաէներգիա ներմուծեն հարևան երկրներից, քանի որ բացակայում են անհրաժեշտ իրավական հիմքերը: Էլեկտրաէներգետիկ համակարգի ֆինանսական հոսքերը կատարվում են ԲՅՕ-ի միջոցով: Դա ստեղծում է բարձր ռիսկեր շուկայի մասնակիցների և սպառողների համար, երբ կանխատեսված արտադրության ծավալները չեն ապահովվել որևէ պատճառով: Եթե ԲՅՕ-ն ֆինանսապես կայուն չէ կամ առավել ևս սննկացման եզրին է, դա կարող է բերել բնագավառի փլուզմանը: Այդպիսի իրավիճակ ստեղծվել է վերջերս, երբ Հայաստանի էլեկտրաէներգետիկական համակարգը ճգնաժամ ապրեց: Ոչ էլեկտրաէներգիան, ոչ հզորությունը պայմանագրային արժեք չեն ներկայացնում սպառողի համար: Նույնիսկ խոշոր սպառողները պատասխանատվություն չեն կրում «պայմանագրային» էլեկտրաէներգիայի կամ հզորության համար: Այսպիսով, համակարգի տարեկան հաշվեկշիռը ուղիղ ռիսկեր է առաջացնում ԲՅՕ-ի համար, սակայն ոչ առանձին արտադրող կայանի կամ առանձին սպառողի համար: Այդ ռիսկերը փակվում են վերջնական սպառողների սակագների միջոցով՝ ետնահաշվարկի արդյունքում:

⁶<http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=88646>

- Համակարգի անկախ օպերատորը (ՀԱՕ)** գործում է Հանձնաժողովի կողմից տրված թույլտվության (լիցենզիայի) հիման վրա: Հանձնաժողովը ՀԱՕ-ի կողմից մատուցված ծառայությունների դիմաց սահմանում է ամսական վճարներ: ՀԱՕ-ն իրականացնում է մեծածախ շուկայի գործունեության և տնտեսական կարգավարման գործառնությունները: Էլեկտրաէներգետիկայի բանագավառի աշխատանքի համար ԵՄ-ում կիրառվում է երեք հիմնական մոդելներ – ՀԱՕ, ՀՑՕ և Սեփականության իրավունքի տարանջատում: Հայաստանը հակված է կիրառելու ՀԱՕ-ի մոդելը: Մինչդեռ ՀՑՕ-ի մոդելը, որտեղ ՀԱՕ-ն և ՀՕ-ն հանդես են գալիս մեկ կազմակերպության ներքո, ֆինանսական կայունության առումով ավելի թափանցիկ և ազդեցիկ տարբերակ է, քանի որ բոլոր հաղորդման ակտիվները պատկանում են ՀՑՕ-ին և շահագործվում են վերջինիս կողմից: Այդ պատճառով ՀՀ կառավարությունը կարող է անցնել ՀՑՕ-ի մոդելին, եթե չի պլանավորում սեփականաշնորհել Բարձրավորյալ էլեկտրացանցերը:
- Հաշվարկային կենտրոնը** նույնպես գործում է Հանձնաժողովի կողմից տրված լիցենզիայի հիման վրա, իր ծառայությունների դիմաց ստանալով սահմանված ամսական վճարներ: Հաշվարկային կենտրոնը պատասխանատու է մեծածախ շուկայում էլեկտրաէներգիայի հաշվառման և հաշիվների ներկայացման համար: Հաշվարկային կենտրոնը չի իրականացնում այլ էական գործունեություն: Եվրամիության շուկաներում այս գործառնությունը ընդգրկում է ավելի լայն շրջանակներ, թույլ տալով գործելու որպես Շուկայի Օպերատոր և էլեկտրաէներգետիկ շուկաների կազմակերպման համար պատասխանատու մարմին:

3.4 ՆԵՐԿՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Ներկրման և արտահանման սկզբունքները սահմանված են Էներգետիկայի մասին օրենքով, իսկ կանոնակարգերը՝ օրենսդրական այլ փաստաթղթերով: Ստորև ներկայացված են այդ բնագավառի վերաբերյալ կարևորագույն փաստաթղթերը.

- Էներգետիկայի մասին օրենքը** սահմանում է, որ ներկրման և/կամ արտահանման գործարքներ իրականացնելու համար ցանկացած իրավաբանական անձ պետք է ունենա համապատասխան լիցենզիա, իսկ բոլոր պայմանագրերը մինչև ուժի մեջ մտնելու պահը պետք է գրանցված լինեն Հանձնաժողովի կողմից: Բացի այդ, Հանձնաժողովը սահմանում է լիցենզավորման և պայմանագրերի գրանցման ընթացակարգերը: Էներգետիկայի մասին օրենքը նույնպես սահմանում է ԷԷՀՕ-ի պատասխանատվության շրջանակները, որոնք ներառում են ներկրման/արտահանման հոսքերի կոորդինացումը և համակարգի կարգավարումը: Էլեկտրաէներգիայի արտահանման լիցենզիա տրվում է այն դեպքում միայն, երբ ներքին շուկայի պահանջարկը լիովին բավարարված է և էլեկտրաէներգիայի արտահանումը չի հակասում ներքին սպառողների

շահերին⁷: Հանձնաժողովը նաև սահմանում է ներկյան սակագները: Արտահանման գները չեն սահմանվում Հանձնաժողովի կողմից:

- **Լիցենզավորման կանոնները**⁸ պահանջում են, որպեսզի ներմուծող/արտահանող անձը ներկայացնի (1) ԷԷՀՕ-ի գրավոր համաձայնությունը առ այն, որ ներկրման/արտահանման հոսքերը ողջամտորեն հնարավոր է իրականացնել պլանավորված ռեժիմի ներքո, (2) պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթը (տարեկան մոտ 10000 ԱՄՆ դոլարի չափով) և բանկային երաշխիքը (մոտ 1000 ԱՄՆ դոլարի չափով), (3) հայտատուի պայմանագիրը օտարերկրյա վաճառողի հետ (արտահանման գործարքներին չի վերաբերում): Հանձնաժողովը հայտի մուտքագրման օրվանից 80 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է լիցենզիա:
- **Շուկայի կանոնները**⁹ սահմանված են միայն արտահանման համար: Կանոնները պահանջում են, որպեսզի արտահանողը Արտադրողի, ԷԷՀՕ-ի, ՀՅՕ-ի և Հաշվարկային կենտրոնի հետ պայմանագրեր կնքի՝ Հանձնաժողովի կողմից հաստատված օրինակելի ձևի համաձայն: Ավելի կարևոր է Կանոնների վերոհիշյալ այն դրույթը, որ միայն Հրագրան ՋԷԿ-ը կամ Հրագրան-5 կայանները կարող են իրականացնել արտահանման գործունեություն, եթե այն չի հակասում ներքին սպառողների շահերին:
- **Կարգավորող հանձնաժողովի կողմից պայմանագրերի գրանցման կարգը**¹⁰ պահանջում է, որպեսզի հայտատուն ներկայացնի պայմանագրի 3 պատճեն, որից հետո Հանձնաժողովը ստուգում է դրանց համապատասխանությունը օրինակելի պայմանագրերի/համաձայնագրերի¹¹ հետ և 10 աշխատանքային օրվա ընթացքում գրանցում է այն:
- **Արտակարգ իրավիճակները** սահմանված են Էներգետիկայի մասին օրենքում որպես վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած իրավիճակներ, երբ պատվիրված պահուստային հզորություններով հնարավոր չէ իրականացնել տնտեսական կարգավարում: Էներգետիկայի մասին օրենքում վերջերս կատարված փոփոխությունները թույլ են տալիս արտակարգ իրավիճակներում արտահանել էլեկտրական էներգիան ողջամիտ գնով և գնել այն բաշխիչ ընկերությունից: Բացի այդ, ըստ փոփոխությունների Հանձնաժողովը իրավունք է ստանձնում սահմանել էլեկտրաէներգիայի փոխանակման կանոնները այլ երկրների հետ արտակարգ իրավիճակներում և Հայաստանի տարածքով տարանցիկ փոխադրում իրականացնելիս: Հիմք ընդունելով Էներգետիկայի մասին օրենքը, Հանձնաժողովը վերջերս հաստատել է վթարային կամ անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած

⁷ ՀՀ Էներգետիկայի մասին օրենք

⁸ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=86891>

⁹ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=96645>

¹⁰ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=85057>

¹¹ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=86355>

իրավիճակներում էլեկտրական էներգիայի արտահանման և ներկրման կարգը¹², որի համաձայն էլեկտրաէներգիայի փոխանակման գործառնությունը իրականացնում է ՀՕ-ն, իսկ Համակարգի անկախ օպերատորը իրականացնում է կարգավարման գործառնությունը: Ելնելով էլեկտրաէներգետիկական համակարգի անվտանգության և հուսալիության պահանջներից, ՀԱՕ-ն ստեղծված իրավիճակին համապատասխան որոշումներ է ընդունում, տեղեկացնելով այդ մասին ՀՕ-ին, ԲՅՕ-ին և Հաշվարկային կենտրոնին:

- **Տարանցիկ փոխադրումը** էներգետիկայի մասին օրենքում սահմանված է որպես Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով էլեկտրական էներգիայի (հզորության) տարանցիկ փոխադրում՝ մուտքի մաքսային մարմնից մինչև ելքի մաքսային մարմին: Տարանցիկ փոխադրումը կարգավորվում է Էներգետիկայի մասին օրենքով և Մաքսային կարգավորման մասին օրենքով, ինչպես նաև այլ օրենսդրական փաստաթղթերով: Հանձնաժողովը վերջերս է հաստատել իրավական ակտերը և տարանցիկ փոխադրման կարգը¹³: Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրումը իրականացնում է ՀՕ-ն, իսկ ԷԷՀՕ-ն և Հաշվարկային կենտրոնը իրականացնում են իրենց գործառնությունները: ԷԷՀՕ-ի և Հաշվարկային կենտրոնի հետ տարանցիկ փոխադրման գործարքներ իրականացնելու համար ՀՅՕ-ն կնքում է Հանձնաժողովի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան պայմանագրեր: ՀՅՕ-ի, ԷԷՀՕ-ի և Հաշվարկային կենտրոնի տարանցիկ փոխադրման ծառայության վճարները նույնպես կարգավորվում են Տարանցիկ փոխադրման կարգով:

Արդյունքում.

- Լիցենզավորման ընթացակարգը տևում է մինչև 80 աշխատանքային օր, ինչը անհարկի երկար է և անհնարին է դարձնում արդյունավետ կարճաժամկետ (ամսական, նույնիսկ սեզոնային) առևտրի իրականացումը: Պահանջվող վճարները և երաշխիքները կարող են էապես ազդել պայմանագրերի ֆինանսական ողջամտության վրա, հատկապես, եթե էլեկտրաէներգիայի ներկրման/արտահանման հոսքերը սահմանափակ են:
- Ծուկայի կանները թույլ են տալիս իրականացնել արտահանում միայն երկու ջերմային կայաններից, որոնք են Հրազդան ՋԷԿ-ը և Հրազդան 5-ը: Ցածր արդյունավետության պատճառով Հրազդան ՋԷԿ-ը ընդունակ չէ առաջարկելու մրցունակ գներ: Արդյունքում ստացվում է, որ արտահանման հնարավորություն ունեցող միակ կայանը Հրազդան 5-ն է:
- Արտահանողը պետք է պայմանագրեր կնքի առնվազն ԷԷՀՕ-ի, ՀՅՕ-ի և Հաշվարկային կենտրոնի հետ: Այդ անձանց հետ պայմանագրեր կնքելու հստակ ժամկետներ սահմանված չեն, ինչը առաջացնում է անորոշության ռիսկեր:

¹² <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=96534>

¹³ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=100998>

- Պայմանագրերը ուժի մեջ են մտնում միայն Հանձնաժողովում գրանցվելուց հետո, ինչը տևում է ևս 10 աշխատանքային օր:

Հիմնականում այս կանոնակարգերը էապես բարդացնում են արտահանման/ներկրման գործընթացը, հետևաբար, դրանք անհրաժեշտ է հիմնովին վերանայել՝ օգտակար կարգավորման գործիք լինելու տեսակետից:

3.5 ՍԱԿԱԳՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Էլեկտրաէներգետիկական համակարգի բոլոր սակագները կարգավորվում են, բացառությամբ արտահանման սակագների: Հանձնաժողովը սովորաբար կիրառում է շահույթի նորմայի հաշվարկման մեթոդաբան: Բոլոր ներքին սակագները վերահաշվարկվում են տարեկան կտրվածքով: Կարգավորման խթանիչ մեխանիզմները վերանայման կարիք ունեն: Սակագների կառուցվածքը հետևյալն է¹⁴:

- **Խոշոր արտադրողների սակագները** տարբերակվում են ըստ հզորության և էլեկտրական էներգիայի: Ներկայումս գործող միջին մեծածախ սակագինը, ներառյալ ԱԱՀ, կազմում է 4.9 ԱՄՆ ցենտ/կՎտժ (23.5 դրամ/կՎտժ): Արտադրության միջին ամսական գների տարբերությունը կազմում է մոտ 20%: Սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների ընթացքում, երբ իրականացվում է Հայկական ԱԷԿ-ի հերթական պլանային սպասարկումը, արտադրության միջին գինը, ներառյալ ԱԱՀ, հասնում է 7.1 ԱՄՆ ցենտ/կՎտժ (35 դրամ/կՎտժ): Սակայն այս իրավիճակը կփոխվի հաջորդ երկու տարվա ընթացքում, կապված ՀԱԷԿ-ի վերանորոգման ծրագրի իրականացման հետ: Այն ժամանակ միջին արտադրության գինը զգալիորեն կբարձրանա:
- **Վերականգնվող էներգիայի** գները կարգավորվում են առավելագույն գնի հաշվարկման մեթոդաբանով, տարեկան վերահաշվարկի բանաձևով, որը հաշվի է առնում գնանը և փոխարժեքը: Մինչ օրս ՀԾԿՀ-ի կողմից արևային էներգիայի սակագները դեռ չեն սահմանվել: Նախատեսվում է, որ արևային էներգիայի սակագները կհաստատվեն Համաշխարհային Բանկի «Ցածր եկամուտ ունեցող երկներում վերականգնվող էներգետիկայի ընդլայնման ծրագրի» (Program for Scaling up Renewable Energy Program for Low Income Countries/SREP) շրջանակներում՝ ֆոտովոլտային էլեկտրակայանների կառուցման համար անցկացվող տեղեկությունների միջոցով: Նախատեսվում է մասնավոր ներդրումներով աջակցել երկրում առաջին 40-50 ՄՎտ հզորությամբ արևային ՖՎ էլեկտրակայանների կառուցման ֆինանսավորմանը, իսկ օգտագործելով SREP ծրագրի միջոցները՝ նվազեցնել սակագների ազդեցությունը: Իսմելու ջրի խողովակների վրա կառուցված փոքր ՀԷԿ-երի գործող սակագինը, ներառյալ ԱԱՀ, կազմում է 2.6 ԱՄՆ ցենտ/կՎտժ (12.6 դրամ/կՎտժ), ոռոգման համակարգերի վրա կառուցված ՀԷԿ-երի սակագինը կազմում է 3.9 ԱՄՆ ցենտ/կՎտժ (18.9 դրամ/կՎտժ), ջրահոսքերի վրա՝ 5.8 ԱՄՆ

¹⁴<http://www.psrc.am/am/announcements/announcement/2142-1>

ցենտ/կՎտժ (28.4 դրամ/կՎտժ), իսկ հողմային էլեկտրակայանների և կենսազանգվածային տեխնոլոգիաների սակագինը կազմում է 10.4 ԱՄՆ ցենտ/կՎտժ (50.9 դրամ/կՎտժ):

- **Հաղորդման սակագները** մեծաձախ շուկայի և արտահանման համար ֆիքսված են և կազմում են մոտ 2.0 ԱՄՆ ցենտ/կՎտժ (1.0 դրամ/կՎտժ), ներառյալ ԱԱՀ:
- **Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի և Հաշվարկային կենտրոնի** սակագները սահմանված են որպես ծառայության դիմաց ամսական վճարներ, իսկ արտահանման դեպքում՝ որպես առանձին էլեկտրաէներգիայի գին:
- **Բաշխման սակագները** սահմանված չեն: Համապատասխան իրավական շրջանակների բացակայությունը արեստականորեն սահմանափակում է սպառողի՝ հարևան երկրներից էլեկտրաէներգիա ներկրելու իրավունքը:
- **Վերջնական սպառողի սակագները** տարբերակվում են ըստ լարման մակարդակների, ցերեկային և գիշերային ժամերի: Սահմանված չեն հզորության դիմաց վճարներ, պիկային սակագներ կամ ծառայության վճարներ: Արդյունքում, սպառողները պատասխանատվություն չեն կրում խոշոր արտադրողների համար սահմանված հզորության վճարների նկատմամբ: Հայաստանի վերջնական սպառողների սակագինը ամենաբարձր սակագներից մեկն է նախկին Սովետական երկրների միջև¹⁵: Օրինակ, կենցաղային սպառողների միջին սակագինը (ցերեկային և գիշերային), ներառյալ ԱԱՀ, կազմում է 9.6 ԱՄՆ ցենտ/կՎտժ (47.0 դրամ/կՎտժ):

Գիշերային սակագինը ձմեռային ամիսներին գործում է 23:00-07:00 ժամերին, ամառային ամիսներին՝ 22:00-06:00 ժամերին: Ձմեռային ամիսների երեկոյան պիկը ընկնում է 19:00-21:00 ժամանակահատվածի վրա, իսկ ամռանը այն տեղի է ունենում 21:00-23:00: Ցերեկային և գիշերային սակագների միջին տարբերությունը բարձր լարման (110 կՎ, 35 կՎ) սպառողների համար կազմում է ընդամենը 12%, իսկ միջին (6/10 կՎ) և ցածր լարման (0.4(0.22) կՎ) սպառողների համար այն կազմում է 26%:

Անհրաժեշտ է նշել, որ նույնիսկ, եթե Հանձնաժողովը կիրառում է շահույթի նորմայի կարգավորման մեթոդը (Rate of Return methodology), պետական ընկերությունների շահույթի նորման կազմում է ընդամենը 10% (ներառյալ հարկերը, տեղական արժույթով): Այս ընկերությունները խոշոր ներդրումներ են կատարում «փափուկ վարկերի» միջոցով պետության կողմից երաշխիք տրամադրելու պայմանով: Այսպիսով, պետական սեփականություն հանդիսացող ընկերությունները չեն կարողանում օգտվել առևտրային վարկերից և գործել որպես ստանդարտ առևտրային սուբյեկտներ:

¹⁵ http://www.psrc.am/images/News/PSRC_Consulting_Services_Part_1_Report_ARM.pdf

3.6 ՀԵՏԱԳԱԾԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆՆԵՐ

ԱՄՆ ՄԶԳ գործակալության աջակցությամբ ՀՀ կառավարության և Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության համագործակցության արդյունքում մշակվել է ՀՀ Էներգետիկ համակարգի նվազագույն ծախսերով զարգացման ծրագիրը¹⁶¹⁷: 2015թ. դեկտեմբերի 10-ին ՀԿ-ի կողմից հավանության է արժանացել «Հայաստանի Հանրապետության Էներգետիկ համակարգի երկարաժամկետ (մինչև 2036 թ.) զարգացման ուղիները» ծրագիրը¹⁸, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալը.

- 2017 և 2018 թվականների ընթացքում Հայկական ԱԷԿ-ի վերականգնում ուղղված կայանի շահագործման նախագծային ժամկետի 10 տարով երկարացմանը: Վերականգնման ծախսերը կկազմեն 300 միլիոն ԱՄՆ դոլար:

Պետք է նշել, որ վերականգնման աշխատանքները թույլ կտան ոչ միայն երկարացնել Հայկական ԱԷԿ-ի նախագծային ժամկետը, այլ նաև կայանի 385 ՄՎտ աշխատանքային հզորությունը մոտեցնել իր դրվածքային 440 ՄՎտ մակարդակին: Արդյունքում, ՀԱԷԿ-ը հնարավորություն կունենա արտադրելու 10-15%-ով ավելի շատ էլեկտրաէներգիա (250 – 350 ԳՎտժ տարեկան): Սակայն, Հայկական ատոմակայանի սակագիրը 2019թ-ից զգալիորեն կբարձրանա՝ վերականգնման ծախսերը փակելու նպատակով:

- Նոր 600 ՄՎտ հզորությամբ ատոմային էներգաբլոկի կառուցում:
- Հրազդան ՋԷԿ-ը նախատեսվում է 2019 թ. շահագործումից հանել անարդյունավետ լինելու պատճառով: Նախատեսվում է մեկ 240ՄՎտ հզորությամբ ՀԾԳՑԷ-ի էներգաբլոկ տեղադրել 2019 թ. և մեկ այլ 400ՄՎտ էներգաբլոկ տեղադրել 2022 թվականին: Այս երկու էներգաբլոկները կփոխարինեն Հրազդան ՋԷԿ-ը և կապահովեն գազ-էլեկտրաէներգիա փոխանակման պայմանագրով սահմանված ծավալները: Սակայն վերլուծությունը ընդունում է, որ երկրորդ 400 ՄՎտ հզորությամբ բլոկի կառուցման վերաբերյալ վերջնական որոշումը կախված կլինի երկրի տնտեսական ցուցանիշներից/ՀՆԱ-ի աճից, փոխանակման պայմանագրի ընդլայնման հնարավորություններից և Վրաստանից տնտեսապես շահավետ ներկրում իրականացնելու հեռանկարից:

2015 թ. նոյեմբեր ամսին ՀՀ կառավարության և «ՌԵՆԿՈ» ընկերության միջև կնքվեց համակցված շոգեգազային ցիկլով 234 ՄՎտ ընդհանուր հզորությամբ և ոչ պակաս, քան 50.5% արդյունավետությամբ էլեկտրաէներգիա արտադրող նոր էլեկտրակայանի կառուցման և շահագործման վերաբերյալ Փոխըմբռնման հուշագիր¹⁹: Այս հուշագրով կողմերը հաստատեցին իրենց փոխադարձ պարտավորվածությունները, որոնցից ամենակարևորները հետևյալն են. տրամադրել հաջորդ 20 տարվա ընթացքում արտադրվող էլեկտրաէներգիայի

¹⁶http://leds.am/ss/USAID%20SUCCESS%20STORY_Strategy%20meeting.pdf

¹⁷http://leds.am/ss/USAID%20SUCCESS%20STORY_LCGP.pdf

¹⁸<https://www.e-gov.am/protocols/item/582/>

¹⁹https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2015/11/15_1364_1.pdf

զմանան երաշխիք չ՛լ կառավարության կողմից (սկսած շահագործման հանձնելու տարվանից), 30 ամսվա ժամանակահատվածում կառուցել նոր էլեկտրակայան և սահմանել ֆիքսված սակագին՝ 6.62 ԱՄՆ ցենտ/կՎտժ առանց ԱԱՀ՝ «ՌԵՆԿՈ»-ի կողմից վերահաշվարկի մեխանիզմի կիրառման հնարավորություն:

2016 թ. փետրվարին չ՛լ կառավարությունը նույն հիմունքներով երկրորդ Փոխըմբռնման հուշագիրն է ստորագրել «Գրենջ Փատւէր» ՄՊԸ-ի հետ²⁰: Երկրորդ չ՛ԾԳՑ կայանը, որը կունենա նույն հզորությունը և արդյունավետության գործակիցը, կկառուցվի Լոռվա մարզում Վանսաձոր քաղաքի մոտակայքում:

Այս որոշումներից ոչ մեկը վերջնական չէ: Վերոհիշյալ ընկերությունները հաջորդ 4 ամսվա ընթացքում կիրականացնեն նախագծերի ֆինանսական և տեխնիկական նպատակահարմարության ուսումնասիրությունը, որից հետո միայն կառավարության հետ կկնքվեն վերջնական պայմանագրեր:

- Երեք նոր մեծ հիդրոէլեկտրակայաններ պետք է կառուցվեն և շահագործման հանձնվեն մինչև 2036 թ.: 2022 թ. շահագործման կհանձնվեն 66 ՄՎտ հզորություն և 208 ԳՎտժ տարեկան արտադրություն ունեցող Լոռիբերդ չ՛ԷԿ-ը և 70 ՄՎտ հզորություն և 270 ԳՎտժ տարեկան արտադրություն ունեցող Ծնող չ՛ԷԿ-ը: Բացի այդ, 2034 թ. էլեկտրաէներգետիկական համակարգում իր աշխատանքը կսկսի ևս մեկ կայան՝ 130 ՄՎտ ընդհանուր հզորությամբ և 800 ԳՎտժ տարեկան արտադրությամբ Մեղրի չ՛ԷԿ-ը:

Չարկ է նշել, որ Լոռիբերդ և Ծնող չ՛ԷԿ-երի կառուցման համար կառավարությունը մոտադիր է գրավել մասնավոր ներդրողներին: Միևնույն ժամանակ հիդրոէներգետիկական համակարգի զարգացման պլանում²¹ առաջարկվում է, որպեսզի 2016 թ-ից այս չ՛ԷԿ-երի համար չ՛անձնաժողովը սահմանի առավելագույն գին (price cap tariff)՝ 6.5 ԱՄՆ ցենտ/կՎտժ, առանց ԱԱՀ: Լոռիբերդ չ՛ԷԿ-ի նախագծի սկսնակալող ծախսերը կազմում են 160 միլիոն ԱՄՆ դոլար, իսկ Ծնող չ՛ԷԿ-ի ծախսերը՝ մոտավորապես 190 միլիոն ԱՄՆ դոլար: Այդպիսի չ՛ԷԿ-երի կառուցման ժամկետը մոտ 5 տարի է: Մինչ օրս մասնավոր ներդրողներ չ՛են ներգրավվել այս նախագծերում, և ավելի իրատեսական է, որ այս կայանները 2022 թ. պատրաստ չլինեն շահագործմանը: Մյուս կողմից էլ մեծ հարց է, թե արդյոք վերը նշված ֆիքսված սակագինը գրավիչ կլինի մասնավոր ներդրողի համար:

Չ՛լ կառավարության կողմից ԱՄՆ ՄԶԳ գործակալության աջակցությամբ մշակվել է նվազագույն ծախսերով չ՛այաստանի էլեկտրաէներգետիկ համակարգի զարգացման ծրագիրը (ՆԾԶԾ), որի ուղարկության կենտրոնում ի թիվս այլ նոր արտադրական հզորությունների դիտարկվում են 3 նոր խոշոր հիդրոկայաններ: ՆԾԶԾ-ում ներկայացված են այդ չ՛ԷԿ-երի հզորության, արդյունավետության, սեզոնային գործոնների, տարեկան առավելագույն

²⁰ <https://www.e-gov.am/ajax/gfn.php?f=AKV-04-24-02.doc>

²¹ https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/09/qax35-12_1.pdf

արտադրության, ներդրումների, ֆիքսված և փոփոխական ծախսերի և կառուցման ժամկետների վերաբերյալ տվյալները: Ծրագրում կատարվում է էներգետիկ համակարգի ծախսումների, զարգացման ուղիների, սիուսի (փոխանակման), արտահանման և ներկրման տարբերակների վերլուծությունը սարքեր սցենարների իրագործման դեպքում:

- Վերականգնվող էներգետիկայի զարգացումը մեկ այլ կարևոր հեռանկարային ուղի է: Այսօրվա դրությամբ համակարգում աշխատում են 170 փոքր (մինչև 30 ՄՎտ) մասնավոր ՀԷԿ-եր, որոնց ընդհանուր հզորությունը կազմում է 300 ՄՎտ, իսկ տարեկան արտադրանքը՝ 700 ԳՎտժ: 2016 թ. հունվարի 1-ի դրությամբ մոտ 45 փոքր ՀԷԿ, որոնց ընդհանուր հզորությունը 90 ՄՎտ է, տարեկան արտադրանքը՝ 315 ԳՎտժ, գտնվում են կառուցման փուլում: Չարգացման ուղիները նպատակ են դնում մինչև 2021 թ. կառուցել 150 ՄՎտ ընդհանուր հզորությամբ փոքր ՀԷԿ-եր:

Դժվար է կանխատեսել, թե արդյոք մինչև 2021 թ. հնարավոր է կառուցել լրացուցիչ 60 ՄՎտ հզորությամբ նոր ՓՀԷԿ-եր, քանի որ ներկայիս սակագնի տակ ընկած, տնտեսապես գրավիչ նախագծերը, կարծես, սպառվել են: Ամեն դեպքում, պետք է նշել, որ ներկա պահին գործող 170 ՓՀԷԿ-երի արդյունավետության գործակիցը ցածր է, դրանք աշխատում են 2200 ժամ/տարի, երբ նախագծային հզորության գործակիցը 2800 է: Ի վերջո, նախատեսվող փոքր ՀԷԿ-երը կարտադրեն տարեկան մոտ 1000 ԳՎտժ, որը կարող է հասցվել մինչև 1200 ՄՎտժ էջժե գործող ՓՀԷԿ-երում նոր ներդրումներ կատարվեն արդյունավետության բարձրացման նպատակով:

- Նախատեսվում է նաև 2021-2024 թվականներին կառուցել 40 ՄՎտ արևային և 30 ՄՎտ երկրաջերմային էլեկտրակայաններ՝ մասնավոր ներդրողների մասնակցությամբ: Հողմային հզորությունների զարգացման հեռանկարները ծրագրում դիտարկված չեն:
- ՀՀ կառավարությունը պլանավորում է ամբողջությամբ վերականգնել հաղորդման համակարգը և բարձրացնել հաղորդման ցանցի հզորությունը: Երկարաժամկետ (մինչև 2036 թ.) զարգացման ծրագրով նախատեսված հաղորդման ցանցի վերանորոգման ծախսերը կկատարվեն վարկերի հաշվին, մասնավորապես՝ Վերականգնման և զարգացման միջազգային (IBRD) բանկից 115 միլիոն ԱՄՆ դոլար և Ասիական զարգացման (ADB) բանկից 23 միլիոն ԱՄՆ դոլար կհատկացվեն 220 կՎ և 110 կՎ ենթակայանների վերանորոգման համար: Հաղորդման ցանցի հուսալիությունը բարձրացնելու նպատակով նախատեսվում է IBRD բանկի 39 միլիոն ԱՄՆ դոլար վարկով կառուցել վեց 220 կՎ և երկու 110 կՎ օդային գիծ: Մոտավորապես 11 միլիոն Եվրո կտրամադրի KfW զարգացման բանկը՝ 220կՎ և 110կՎ օդային գծերի վերանորոգման համար: KfW բանկից և Եվրամիության կողմից մի շարք վարկեր կհատկացվեն Հայաստան-Վրաստան 400կՎ միջհամակարգային հաղորդման գծի և հաստատուն հոսանքի ներդիրի՝ մինչև 2018 թ. կառուցմանը, ինչը կնպաստի Հայաստանի էլեկտրաէներգետիկ համակարգի՝ տարածաշրջանային ինտեգրման հնարավորությունների ընդլայնմանը:
- Ծուկայի կառուցվածքը և սակագների մշակումը հետագա զարգացման ևս մեկ կարևորագույն մասն է: Չարգացման միջնաժամկետ հեռանկարներով ենթադրվում է, որ Հայաստանի էլեկտրաէներգետիկական շուկան կազատականացվի, նպաստելով արդյունավետության բարձրացմանը և ներդրումների խթանմանը: Վրաստանի հետ առևտրի զարգացմանը նպաստելու նպատակով անհրաժեշտ կլինի է իրագործել մի

շարք նոր մեխանիզմներ, ներառյալ տարանցիկ փոխադրման, բալանսավորման, ծառայությունների մատուցման, վթարային մատակարարման և արտապլանային հոսքերի կարգավորման մեխանիզմները: Սակագների հաշվարկի մեթոդաբանության վերանայումը, որի արդյունքում կներկայացվեն առավել արդյունավետ սեզոնային և ժամային սակագնային կառուցվածքներ, նույնպես հանդիսանում է շուկայի զարգացման միջնաժամկետ բարեփոխումների մի մասը: Վերը նշված բոլոր գործունեությունները նախատեսվում է իրականացնել 2016-2019 թթ. ժամանակահատվածում:

- Ամբողջ ենթակառուցվածքի զարգացման արդյունքում սակագների մակարդակը կբարձրանա 1.1 ԱՄՆ ցենտ/կՎտժ (5.5 դրամ/կՎտժ) չափով և 2020-2021 թթ. կհասնի իր առավելագույն մակարդակին՝ եզրակացնում է զարգացման ուղիների մասին ՀՀ կառավարության կողմից հաստատված փաստաթուղթը:

3.7 ՀԱՂՈՐԴՄԱՆ ՑԱՆՑԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՉՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՎՐԱ

Հայաստանը դերևս Սովետական միության ժամանակներից ուներ հուսալի հաղորդման ենթակառուցվածք: Վերջին տարիներին շահագործման հանձնվեց մեկ 220կՎ միջհամակարգային գիծ և վերանորոգվեց մի շարք բարձրավոլտ ենթակայաններ: 2015-ին հաղորդման սակագինը սահմանվել է 0.2 ԱՄՆ ցենտ/կՎտժ (1.0 դրամ/կՎտժ), ներառյալ ԱԱՀ: Նոր միջհամակարգային կապերի կառուցումը լուրջ ազդեցություն կունենա հաղորդման գների վրա: Այս կապերը բացառապես ծառայելու են արտահանման/ներկրման նպատակներին, սակայն կբարձրացնեն էներգամատակարարման հուսալիությունը ներքին սպառողների համար: Միջսահմանային առևտրի համար անհրաժեշտ է ունենալ համապատասխան ենթակառուցվածք, որը պետք է նախագծվի տեխնիկական հնարավորություններին և տնտեսական հիմնավորմանը խիստ համապատասխան: Այլապես, դա կխոչընդոտի միջազգային առևտրի զարգացումը և առավել կծանրացնի ներքին սպառողների վրա ընկած ֆինանսական բեռը:

Հայաստանն ու Վրաստանը կապված են հետևյալ միջհամակարգային գծերով. (1) 220կՎ Ալավերդի-Գարդաբանի, (2) 110կՎ Աշոցք-Նինոցմինդա և (3) 110կՎ Ալավերդի-Սադախո (Նկար 1):

Այսօրվա իրավիճակում Վրաստանը Ռուսաստանի հետ, իսկ Հայաստանը Իրանի հետ աշխատում են սինքրոն ռեժիմում: Հայկական և վրացական համակարգերի միջև հնարավոր է իրականացնել միայն ասինքրոն աշխատանք կամ կղզիացած աշխատանք: Կղզիացած աշխատանքի դեպքում հնարավոր չէ ապահովել էլեկտրաէներգիայի էական հոսքեր (մինչև 40 ՄՎտ): Քանի որ այս իրավիճակը անհավանական է, որ փոխվի, Հայաստանի և Վրաստանի համակարգերի զոգահեռ ասինքրոն աշխատանքը հաստատուն հոսանքի ներդիրների միջոցով ընտրվել է որպես հիմնական տարբերակ:

Այդ նախագիծը նպատակ ունի հաստատել ասինքրոն կապ Հայաստանի ու Վրաստանի միջև և դրանով ապահովել էլեկտրաէներգիայի հուսալի, ճկուն և փոխադարձաբեր միջսահմանային առևտուր: Բացի այդ, նախագիծը կբարելավի երկրի էներգետիկ համակարգի ենթակառուցվածքը, կբարձրացնի էներգետիկ անվտանգության

մակարդակը, կնպաստի արտահանման և տարանցիկ փոխադրման հնարավորությունների ընդլայնմանը:

ՆԿԱՐ 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ



Նախագծի նպատակն է Հայաստանը միացնել Վրաստանի էլեկտրացանցին 500/400/220 կՎ հաստատուն հոսանքի ներդիրի միջոցով և Հայաստանի Այրում ենթակայանում (վրացական սահմանի մոտ) ունենալ 1050 ՄՎտ վերջնական հզորություն: Վրացական կողմից միացումը իրականացվում է Մարնետուլի ենթակայանից (նախագծում ներառված չէ) 500կՎ լարման գծով, իսկ հայկական կողմից՝ Հրազդան ենթակայանից 400կՎ լարման գծով (նախագծի առաջին փուլում Ալավերդի ենթակայանից 220կՎ գծով): Ամբողջ նախագիծը իրականացվելու է 3 հաջորդող փուլերով, դրանցից յուրաքանչյուրում անհրաժեշտ ենթակառուցվածքի և 350ՄՎտ հաստատուն հոսանքի ներդիրի կառուցմամբ: Առաջին փուլը ավարտելուց հետո առավելագույն փոխանցման հզորությունը կհասնի 200 ՄՎտ մակարդակին: Նախագծի դիզայնը հիմնված է Ֆիխտներ խորհրդատվական ընկերության կողմից 2013թ. փետրվարին պատրաստված նախնական և 2014թ. փետրվարին պատրաստված վերջնական տեխնիկա-տնտեսական հիմնավորման ուսումնասիրությունների վրա: Առաջին փուլի հաշվարկային արժեքը կազմել է մոտ 188 միլիոն Եվրո, ներառյալ KfW-ի կողմից 5-10 տարի արտոնյալ ժամկետով տրամադրված մի շարք փափուկ վարկերը: Հաջորդ երկու փուլերի վերաբերյալ վերջնական որոշումը կախված կլինի նոր հաղորդման ենթակառուցվածքի միջոցով իրականացվող էլեկտրաէներգիայի փաստացի փոխանակման ծավալներից և առևտրի հնարավորություններից:

Եթե Հանձնաժողովը շարունակի կիրառել սակագնի հաշվարկման նույն մեթոդոլոգիան, այսինքն, կիսելով զարգացման ծախսերը ներքին շուկայի հոսքերի և արտահանման/ներկրման, ինչպես նաև տարանցիկ փոխադրման հոսքերի միջև, ապա միջին հաղորդման սակագինը կբարձրանա երեք անգամ համեմատած 2015թ. հետ: Հաղորդման ապագա սակագինը շատ զգայուն կլինի արտաքին հոսքերի ծավալների նկատմամբ և կանխատեսվող հոսքերը մեծ ազդեցություն կունենան տարանցիկ փոխադրման և միջսահմանային առևտրի հասանելիության վրա: Ներկայումս կիրառվող սակագնի հաշվարկի մեթոդոլոգիան ավելի հարմարավետ պայմաններ է ստեղծում տարանցիկ փոխադրման և միջսահմանային առևտրի համար, քանի որ զարգացման ծախսերի բեռը մասամբ կրում են ներքին շուկայի մասնակիցները:

4. ԻՐԱՎՎԻՃԱԿԸ ՎՐԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿ ՇՈՒԿԱՅՈՒՄ

4.1 ՆԵՐՔԻՆ ՇՈՒԿԱՅԻ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ և ՄԻՋՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ

Էլեկտրաէներգետիկ շուկայի կանոններին համաձայն էլեկտրաէներգետիկայի բնագավառի լիցենզավորված անձինք կնքում են կարճատև (1 տարի) կամ երկարատև (5 տարի) վաճառքի և գնման ուղիղ պայմանագրեր: Պայմանագրերը կնքվում են սպառողի և արտադրողի միջև, իսկ բալանսային հզորության գնման դեպքում պայմանագիրը կնքվում է կոմերցիոն օպերատորի հետ: Գնորդը պարտավորվում է ունենալ պահուստային հզորություն, որը կազմում է իրեն սպառված էլեկտրաէներգիայի 10% (առնվազն 5% պետք է մատակարարվի տեղական աղբյուրներից)՝ երկրի էներգետիկ անվտանգությունը ապահովելու նպատակով: Հնարավոր է պահուստային հզորությունը մատակարարել ուղիղ պայմանագրով, մասնավոր աղբյուրներից կամ կոմերցիոն օպերատորից: 2013-2015 թվականների համար սահմանված 10% քվոտան ամբողջովին պետք է մատակարարվի տեղական աղբյուրներից: 2016-2019 թվականների համար պահանջվող պահուստային հզորության քվոտան կանի մինչև 15%, որը նույնպես ամբողջովին պետք է ապահովվի տեղական աղբյուրներից: Բալանսային էլեկտրաէներգիայի առևտուրը իրականացնում է կոմերցիոն օպերատորը: Կոմերցիոն օպերատորը բալանսավորում է փաստացի սպառման ծավալի և սպառողի ու արտադրողի միջև կնքված ուղիղ պայմանագրում նշված ծավալի տարբերությունը:

Էլեկտրաէներգիայի գործարքը կոմերցիոն օպերատորը իրականացնում է երկու եղանակով: Առաջինը՝ չալանավորված սպառում կամ երբ ուղիղ պայմանագիր չի կնքվել: Այս դեպքում սպառողը ավտոմատ կերպով է գնում էլեկտրաէներգիան կոմերցիոն օպերատորից: Երկրորդ տարբերակով, կոմերցիոն օպերատորը և սպառողը պայմանագիր են կնքում, որի մեջ նշված չեն գնվող էլեկտրաէներգիայի ոչ ծավալը, ոչ գինը: Յուրաքանչյուր կոնկրետ պատվերից հետո կողմերը առաջարկում են իրենց համար ընդունելի գներ: Այս դեպքում գործարքը կատարվում է այսպես կոչված էլեկտրաէներգիայի փոխանակման ձևաչափով, որը չի ազդում սպառողի սակագնի վրա: Համակարգի կոմերցիոն օպերատորը ծառայություններ է մատուցում Վրաստանի էներգետիկայի և ջրամատակարարման կարգավորման ազգային հանձնաժողովի (ՎԷՋԿԱՀ) կողմից սահմանված սակագնով: Պետք է նշել, որ սպառողը հնարավորություն ունի գնելու բալանսային էլեկտրաէներգիա ոչ միայն կոմերցիոն օպերատորից, այլ նաև ուղիղ պայմանագրերի միջոցով: Ուղիղ պայմանագրերը հասանելի են տարեկան 7 միլիոն կՎտԺ օգտագործող սպառողների համար: 2008 թ. օգոստոսից սկսած տեղի է ունեցել 2008 թ. օգոստոսի 1-ից հետո կառուցված՝ հիդրոէլեկտրակայանների լիարժեք

ապակարգավորումը: Այդ կայանները իրավունք ստացան իրականացնելու էլեկտրաէներգիայի առևտուր ազատ (չկարգավորվող) սակագներով:

Ներկա պահին, Վրաստանի ներքին շուկան դեռ գործում է ամսական կտրվածքով, թեև վերջին տարիներին այն հետապնդել է ժամային շուկա անցնելու քաղաքականությունը, ուղղորդվելով Եվրամիության հետ կնքված Ասոցիացման համաձայնագրով: Վրաստանում մշակվել է էլեկտրաէներգետիկ շուկայի մոդելը (GEMM2015) և էլեկտրաէներգիայի առևտրի մեխանիզմը, ընդունվել է Ցանցային օրենսգիրքը: Աշխատանք է կատարվում նաև Շուկայի նոր կանոնները մշակելու ուղղությամբ, որոնք նույնպես անդրադառնում են շուկայի բացմանը: Շուկան գործելու է ժամային կտրվածքով, հետևյալ առևտրային ուղղությունների.

- Ամսական պայմանագրեր
- Ազատ բանակցություններ Շուկայի Մասնակիցների միջև
- Օր առաջ շուկա (Day Ahead Market)
- Բալանսային շուկա

Մոտ 50 խոշոր սպառողների (հիմա 4) որոշումը, որոնք դուրս են գալու բաշխիչ ընկերություններից և մտնելու են շուկա որպես Շուկայի մասնակիցներ, գրեթե արդեն ընդունված է: Արտադրության գինը շուկայի բոլոր ուղիղ սպառողների համար ավելի բարձր կլինի, քան բաշխիչ ընկերությունների համար, սակայն նրանք կունենան երկկողմանի պայմանագրեր կնքելու իրավունք՝ ազատ բանակցությունների արդյունքում, և այդ պատճառով շահագրգռված կլինեն գտնելու ամենաէժեք էլեկտրաէներգիա, նույնիսկ արտաքին շուկաներից: Այսօր, բաշխիչ ընկերությունների համար առավելագույն միջին մեծածախ գինը մոտ 110 լարի /ՄՎտժ կամ 45.8 ԱՄՆ դոլար/ՄՎտժ գինն է, առանց ԱԱՀ²².

Վերջին տարիներին Վրաստանի էլեկտրաէներգետիկ համակարգը տարբեր փոփոխությունների է ենթարկվել: Էլեկտրաէներգիայի հաշվեկշռի վերաբերյալ տվյալները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1 Էլեկտրաէներգիայի հաշվեկշռի հիմնական տարեկան տվյալները, ԳՎտժ²³

	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Ներքին սպառում	7815	8075	7642	8441	9257	9379	9690	10170	10382
Արտահանում	626	680	749	1524	931	528	451	545	660
Ռուսաստան	300	433	526	1117	589	369	371	160	170
Հայաստան			20	90	117	68	73	141	70
Ադրբեջան	110	31	21	14	6	12	7	8	
Թուրքիա	216	216	182	303	219	79		236	420

²² www.gnnerc.org

²³ www.esco.ge

Արտադրություն	8346	8451	8408	10058	10104	9695	10059	10370	10833
<i>Հիդրոկայաններ</i>	6831	7169	7417	9375	7892	7223	8271	8334	8454
<i>Ջերմակայաններ</i>	1515	1282	991	683	2212	2472	1788	2036	2379
Ներկրում	433	649	255	222	471	615	484	793	699
<i>Ռուսաստան</i>	177	560	223	212	448	517	460	607	511
<i>Հայաստան</i>		54	40					2	86
<i>Ադրբեջան</i>	107	35	31	10	23	98	24	184	102
<i>Թուրքիա</i>	149		1						
Տարանցիկ փոխադրումներ								59	

Մասնավորապես՝ կառուցվել է Վրաստան-Թուրքիա նոր միջհամակարգային գիծը, ստեղծելով տարածաշրջանի երկրների համար Թուրքիայի էլեկտրաէներգետիկ շուկա մտնելու տեխնիկական պայմաններ: Սակայն ինչպես երևում է Աղյուսակ 4.1.1-ից, 2013 թ. հետո (նոր գիծը շահագործման հանձնելու տարին) Վրաստանից Թուրքիա տարանցման և արտահանման հոսքերի ծավալները շատ փոքր են եղել: Դա պայմանավորված է հետևյալ գործոններով.

- Վրաստանում և հարևան երկրներում էլեկտրաէներգիայի արտադրության հավելուրդի բացակայություն,
- Թուրքիա ներկրելու սահմանափակում՝ ապրիլից հունիս ընկած ժամանակահատվածում, երբ Վրաստանը առավելագույն արտահանման հնարավորությունը ունի (100-300 ՄՎտ): Այդ երկրների «առատ ջրի» սեզոնները համընկնում են այդ ամիսներին,
- Արտահանման բարձր գներ, ներառյալ՝ հաղորդման սակագինը),
- Թուրքիայում սպառման աճի, ինչպես նաև ներքին շուկայի գների նվազում:

4.2 ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՈՒՈՐՏՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԶՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՎՐԱ

Վերջին տարիների ընթացքում Վրաստանը ապավինել է նոր արտադրական հզորությունների զարգացմանը, առաջինը՝ իր ներքին շուկայի կարիքները բավարարելու և ներկրման կախվածությունը նվազեցնելու համար: **Աղյուսակ 2-ը** ցուցադրում է

Վրաստանի նոր արտադրական հզորությունների ավարտված և մոտակա երկու տարիներում ավարտվող կառուցման նախագծերը:

Աղյուսակ 2 Վրաստանի նոր արտադրական հզորությունները²⁴

<i>Անվանում</i>	<i>Կարգավիճակ</i>	<i>Ընդհանուր հզորություն, ՄՎտ</i>	<i>Տարի</i>
<i>Խաղրղի 2</i>	Գործող	5.4	2012
<i>Շիրդա</i>	Գործող	5.0	2013
<i>Բախվի 3</i>	Գործող	9.8	2013
<i>Արագանի</i>	Գործող	6.2	2013
<i>Լարսի</i>	Գործող	19.0	2013
<i>Փառավանի</i>	Գործող	85.0	2014
<i>Ախմետա</i>	Գործող	9.1	2014
<i>Արագվի</i>	Գործող	8.0	2014
<i>Կազրեզի</i>	Գործող	5.0	2014
<i>Կազրենտի</i>	Գործող	3.5	2014
<i>Ռաչա</i>	Գործող	11.0	2014
<i>Նաբեգլավի</i>	Գործող	1.9	2014
<i>Փշավերա</i>	Գործող	1.9	2015
<i>Գարդաբանի (ջերմային)</i>	Գործող	230	2015
ԸՆԴԱՄԵՆԸ	Գործող	400.8	2012-2015

<i>Աբուլի</i>	Կառուցվող	22.0	2016
<i>Առակալի</i>	Կառուցվող	9.0	2016
<i>Դարիալի</i>	Կառուցվող	108.0	2016
<i>Գոգինատրի</i>	Կառուցվող	1.8	2016
<i>Կինտրիշի</i>	Կառուցվող	5.0	2016
<i>Օկրուպիատրի</i>	Կառուցվող	1.8	2016
<i>Խելվաչատրի 1</i>	Կառուցվող	47.0	2017

²⁴ Վրաստանի զարգացումը (Growth for Georgia (G4G) project (ՄԱՆ ՄԶԳ-ի ֆինանսավորմամբ), 2015

<i>Խորի 2</i>	Կառուցվող	55.0	2017
<i>Կիմաստի</i>	Կառուցվող	51.0	2017
<i>Լուխունի 2</i>	Կառուցվող	17.2	2017
<i>Մտկվարի HPP</i>	Կառուցվող	53.0	2017
<i>Շուախևալի</i>	Կառուցվող	175.0	2017
ԸՆԴԱՄԵՆԸ	Կառուցվող	545.8	2016-2017

Նոր ՀԷԿ-երի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանց հզորության գործակիցը 50% ոչ պակաս է, իսկ որոշ դեպքերում նույնիսկ ավելին է, այսինքն՝ նոր ՀԷԿ-երի արտադրանքը կազմելու է ոչ պակաս, քան 800 ԳՎտժ:

Այսպիսով, նոր հիդրոէլեկտրակայանների արտադրանքը կնպաստի Վրաստանում էլեկտրաէներգիայի դեֆիցիտի նվազմանը նույնիսկ ձմեռային ամիսներին, հաշվի առած, որ ներքին պահանջարկի վերջին 5 տարվա միջին անը կազմում է տարեկան 2.9% (Աղյուսակ 4.1.1).

Մինչ օրս, հատկապես ձմեռային ամիսներին, ջերմային էլեկտրաէներգիայի արտադրությունը Վրաստանում իրականացվել է Մտխվարի և Տբիլբեսի ՋԷԿ-երի հին, ոչ արդյունավետ էներգաբլոկների հաշվին (ընդհանուր հզորությունը 300 ՄՎտ, արտադրանքը մոտ 3 ՄՎտժ, 1000 մ³ գազի այրմամբ): Արտադրության գինը պահպանվել է ներկայիս մակարդակի վրա՝ Ադրբեյջանի հետ բարենպաստ գնով գազի մատակարարման պայմանագրի շնորհիվ.

- Բնակչություն – 300մլն.մ³՝ 167 ԱՄՆ դոլար/հիւսմ գնով
- ՋԷԿ-եր –700 մլն.մ³՝ 143 ԱՄՆ դոլար/հիւսմ. գնով²⁵

ՋԷԿ-երի ընդհանուր արտադրանքը վերջին տարիներում կազմել է 1800-2500 ԳՎտժ (Աղյուսակ 1): Այս տիրույթի բարձր ցուցանիշը պայմանավորված է գազի առավելագույն ծավալներով, իսկ ցածր ցուցանիշը պայմանավորված է այդ տարիների առավել բարձր հիդրոարտադրության ծավալներով:

110 ՄՎտ ցածր արդյունավետությամբ (32%) գազային տուրբինը ծառայում է որպես պահուստային հզորություն: Գարդաբանի ՋԷԿ-ում կառուցված նոր էներգաբլոկը (կառուցվել է Վրաստանի էներգահամակարգի զարգացման հիմնադրամի միջոցներով, ներդրումները կազմել են 231 միլիոն ԱՄՆ դոլար) կարող է արտադրել ոչ պակաս, քան 1500 ԳՎտժ էլեկտրաէներգիա, եթե վառելիքի բաղադրիչը լինի մինչև 35 ԱՄՆ դոլար/ՄՎտժ (143 ԱՄՆ դոլար/հիւսմ գազի գնի դեպքում): Գազի պահանջը այս դեպքում կլինի մոտ 350 մլն. մ³:

2015 թ. հոկտեմբերին Վրաստանը համաձայնագիր է ստորագրել Dongfang Electric Corporation խոշոր չինական ընկերության հետ՝ Տկիբուլի համակցված ցիկլով ջերմաէլեկտրակայան կառուցելու վերաբերյալ, որը աշխատելու է տեղական քարածուխով

²⁵ <http://factcheck.ge/en/article/what-is-the-aim-of-negotiations-between-georgia-and-gazprom/>

(հզորությունը՝ 150 ՄՎտ, տարեկան արտադրանքը՝ 1000 ԳՎտժ, ներդրումները՝ 180-200 միլիոն ԱՄՆ դոլար, կառուցման ժամկետը՝ 3 տարի)²⁶. Թեև տեղական ածուխը ունի բավականին ցածր կալորիականություն (4000 - 4500 Կկալ/կգ), դրա ցածր գինը (մոտ 60 ԱՄՆ դոլար/տ) կարող է նույնպես ապահովել վառելիքային բաղադրիչի ցածր արժեք:

Այս երկու կայանները միասին կփոխարինեն հին բլոկները և կտան նույնիսկ ավելի շատ արտադրանք, քան ներկայումս գործող ՋԷԿ-երը: Մինչև նույն ժամանակ դա թույլ կտա խնայել 350 մլն.մ³ արտոնյալ գնով գազ և կարող է թույլ տալ Գարդաբանի ՋԷԿ-ում կառուցել մեկ այլ էներգաբլոկ (անհրաժեշտության դեպքում): Բացի այդ, դա կբարձրացնի ՋԷԿ-երի մասնակցությունը: Ներկայումս հին բլոկները բոլորովին չեն կարգավորվում և դա ազդում է էլեկտրաէներգիայի գնի վրա (գիշերային էլեկտրաէներգիան Վրաստանում ավելի թանկ է, քան պիկայինը):

Նախորդ տարիներին Ռուսաստանը ձմեռվա ամիսներին բարձրացնում էր Վրաստանի համար արտահանման գինը: Իրավիճակը կարող է փոխվել, եթե Վրաստանը ազդի գների վրա նույնիսկ որոշ պլանավորված ՀԷԿ-երի ավարտելուց հետո (լրացուցիչ 545 ՄՎտ հզորությունների կառուցումը նախատեսված է իրականացնել հաջորդ 2 տարվա ընթացքում - Աղյուսակ 2) և Տկիբուլի ՋԷԿ-ի կառուցումից հետո:

2016 թ. սկսած Վրաստանը հավանաբար հանդես կգա որպես զուտ էլեկտրաէներգիա արտահանող, հաշվի առնելով, որ նոր Գարդաբանի ՋԷԿ-ը սկսել է աշխատել է միայն 2015 թ. հոկտեմբերի կեսերից (Աղյուսակ 1-ի վերլուծություն): Վրաստանի հիդրոկայանների արտադրանքը կարող է արտահանվել Ռուսաստան և Հայաստան, քանի որ գարուն-ամառ սեզոններին արտահանումը Թուրքիա սահմանափակ է: Արտահանման ծավալների վրա կարող է ազդել միայն ջրի առկայությունը:

Հաղորդման սակագնի աճը Վրաստանում, որը պայմանավորված է Թուրքիայի հետ նոր միջհամակարգային գծերի մեծածավալ կառուցմամբ, կարելի է համարել արտահանման խոչընդոտ.

- 500 կՎ Զեստասպոնի-Ախալցխա, Գարդաբանի-Ախալցխա,
- 400 կՎ Ախալցխա-Թուրքիայի սահման,;
- 500/400/220 կՎ Ախալցխա ենթակայան,
- ՀՀՆ – 2x350ՄՎտ (հնարավոր է զարգացնել մինչև 1050ՄՎտ)

Նախագծի առաջին փուլի արժեքը (ՀՀՆ – 700ՄՎտ) Վրաստանի համար կազմել է մոտ 230 միլիոն Եվրո: Նախագծի ընդհանուր արժեքը (ՀՀՆ-1050 ՄՎտ) ըստ Ֆիխտների ընկերության կողմից 2007 թ. նոյեմբերին պատրաստված «Կովկասյան երկրների տարածաշրջանային էլեկտրահաղորդման ցանցերի ընդլայնում» հաշվետվության հաշվարկների կազմել է 303 միլիոն Եվրո:

²⁶ <http://agenda.ge/news/42103/eng>


Վրաստանից այն ժամանակ, երբ Թուրքիայում, ինչպես և Վրաստանում, «առատ ջրի» սեզոն է:

Այրիլից-հունիս ընկած ժամանակահատվածում Թուրքիան սահմանափակում է ներկրման հոսքերը Վրաստանից մինչև առավելագույնը 300ՄՎտ: Դա նշանակում է, որ Թուրքիան կարող է արտահանել էլեկտրաէներգիան Վրաստան և գնել լրացուցիչ ծավալներ Բուլղարիայից կամ Հունաստանից (ներկայիս գները Եվրոպայում նույնպես զգալիորեն նվազել են): Նույնիսկ հիմա Թուրքիան Վրաստանին էլեկտրաէներգիան առաջարկում է 4-5 ԱՄՆ ցենտ/կՎտժ գնով:

Նոր Վրաստան-Թուրքիա միջհամակարգային գծի իրականացման աշխատանքները կատարում է վրացական կողմը (Թուրքիան կառուցել է միայն Բորչկայից սահման տանող 400կՎ գիծը, որի արժեքը չի գերազանցել 20 միլիոն Եվրո): Բացի այդ, Թուրքիայի ու Վրաստանի միջև կնքված պայմանագրով նախատեսվում է սահմանի վրա ունենալ վանառքի/գնման հանգույց: Այսպիսով, ինչպես արտահանման, այնպես էլ ներկրման գործարքների համար Թուրքիան արդեն այսօր ունի 700 ՄՎտ փոխադրման հզորություն ունեցող հուսալի ենթակառուցվածքի մուտք:

Թուրքիայի արևելյան մասերում, որտեղ բեռը ցածր է, զոյություն ունեն էլեկտրահաղորդման սահմանափակումներ²⁹: Բացի այդ, էներգետիկայի զարգացման 20 տարվա ռազմավարությանը (մինչև 2030 թ.) համաձայն ներդրումների 90% պետք է ուղղվեն արտադրական հզորությունների զարգացմանը, ինչը կբարձրացնի դեպի Վրաստան արտահանելու հետաքրքրվածությունը, հաշվի առնելով, որ Թուրքիան տարածաշրջանի այն երկիրն է, որի արտադրական հզորությունները առավել մոտիկ են Թբիլիսիին:

Նկար 3. Թուրքիայի էլեկտրաէներգիայի համակարգի շեղանկային ցանցը



²⁹ Տարածաշրջանի հաղորդման ցանցերի թողունակության ուսումնասիրության թարմացում Վրաստանի Նոր ՀԷԿ-երի արտադրանքի իրացման նպատակով, Վերջնական հաշվետվություն GRDC, մարտ, 2012թ. : *Update on the Regional Transmission Transfer Capability for Georgia New HPPs Electricity Sales, Final Report, GRDS, March 2012*

Հաղորդման համակարգի օպերատորների եվրոպական ցանցի (ENTSO-E) հետ սինքրոնացումը և մրցակցային շուկայի ստեղծումը (ավելի քան 10 տարի է պահանջվել) թույլ է տվել Թուրքիային բարձրացնել արտաքին առևտրի արդյունավետությունը, ինչպես նաև զգալիորեն նվազեցնել ներքին շուկայի գները:

Էլեկտրաէներգետիկական շուկան ներկայացված է 3 գլխավոր հատվածներով.

- Պայմանագրեր
- Օր առաջ շուկա (Day Ahead Market)
- Բալանսային շուկա³⁰

Պետք է նշել, որ արտահանման/ներկրման պայմանագրերը հստակորեն հիմնված կլինեն ժամային առևտրի վրա, քանի որ ներկայումս այդ պայմանագրերով է իրականացվում առևտուրը Վրաստանի հետ: Գործող շուկայի կանոններին համաձայն միայն Թուրքիայում լիցենզավորված ընկերությունները կարող են դառնալ շուկայի մասնակիցներ, և այդ հանգամանքը հաճախ պահանջում է արտահանման գործարքների համար միջնորդի առկայություն (լրացուցիչ վճարով):

4.4 ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՌԵՎՏՈՒՐԸ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՄԻՋԵՎ

Վերջին տարիներին Ռուսաստանը հանդիսանում էր էլեկտրաէներգիայի հիմնական ներկրողը Վրաստան (Աղյուսակներ 1 և 3): Վրաստանի հին ՋԷԿ-երի արտադրության կտրուկ աճը 2011թ. հետո և համեմատաբար փոքր էլեկտրաէներգիայի հոսքերը վկայում են (1) բարձր ներկրման գների, (2) մատակարարի սահմանափակ հզորության մասին, կամ (3) երկուսը միասին:

ԱղձԻՄԱԿ 3 ՎՐԱՍՏԱՆԻ ՆԵՐԿՐՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ, ԳՎՏԺ³¹

	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Հունվար		121	70	11	77	80	127	126	115
Փետրվար		138	25	0	78	74	75	86	63
Մարտ		79	0	14	22	125	62	4	61
Ապրիլ		53	1		2	22			6
Մայիս			4	1	0	0			1

³⁰ Թուրքական էլեկտրաէներգետիկ շուկայի ուսումնասիրություն, ՅԻՓՓ, Դեղիթ, նոյեմբեր, 2012թ.:

Turkish Electricity Market Review, HIPP, Deloitte, November 2012.

³¹ www.esco.ge

Հունիս			0	2	0	1		1	2
Հուլիս			3	2	7	1		5	1
Օգոստոս	4	48	3	1	2	0	1		15
Սեպտեմբեր	2	24	3	8	16	22	1	65	
Հոկտեմբեր	40	3		44	6	51	17	83	40
Նոյեմբեր	65	18	43	62	97	48	85	139	83
Դեկտեմբեր	66	77	72	68	139	94	94	98	123
Տարի	177	561	224	213	446	518	462	607	510

Էլեկտրաէներգիայի փոխանակումը Ռուսաստանի և Վրաստանի միջև իրականացվում է 500 կՎ Կավկասիոնի գծով, որի փոխանցման հզորությունը 600 ՄՎտ է: Պլանավորվում է կառուցել մեկ այլ 500 կՎ լարման գիծ, որը Ռուսաստանը կմիացնի վրացական Կսանի ենթակայանի հետ: Սակայն դա հնարավոր կլինի, եթե իրականացվեն Ստեպտացմինդայում ՀԷԿ-երի կառուցման պլանները (մոտ 400-500 ՄՎտ):

Ինչպես երևում է Ադյուսակ 3-ից նախորդ տարիների առավելագույն ամսական փոխհոսքերը Ռուսաստանի հետ չեն գերազանցել 140 ԳՎտԺ, իսկ միջին հզորությունը՝ 200 ՄՎտ: Դա կարող է ծառայել որպես ուղենիշ, քանի որ գիշերային ժամերի փոխհոսքերը գերակշռում են պիկային ժամերի փոխհոսքերը՝ ցածր գների և Վրաստանի կարգավորվող ՀԷԿ-երում ջրի կուտակման հնարավորության շնորհիվ: Հարկ է նշել նաև, որ ըստ սինքրոն աշխատանքի պայմանագրերի, այդ գծի էլեկտրաէներգիայի փոխհոսքը երկու ուղղություններով պետք է լինի առնվազն 30-50 ՄՎտ:

Ռուսաստանի և Վրաստանի արտադրության զարգացման իրավիճակի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Ռուսաստանի արտահանման ծավալների աճը կանխատեսելի ապագայում անհավանական է: Հաշվի առնելով Ռուսաստանի էլեկտրաէներգետիկ համակարգի չափը, առանձին գծի կառուցումը (տվյալ դեպքում՝ 500կՎ Մոզդոկ – վրացական սահման) ոչ մի կերպ չի կարող ազդել էլեկտրահաղորդման սակագնի վրա, հետևաբար և Ռուսաստանի՝ արտահանման գնի առաջարկի վրա:

Էլեկտրաէներգիայի փոխանակումը Ռուսաստանի և Վրաստանի միջև (վաճառք Վրաստանի կողմից ամռանը և գնում ձմռանը) իրականացվում էր ժամային կտրվածքով ըստ օրվա ժամային գոտիների: Արդյունքում գիշերային էլեկտրաէներգիան ավելի մատչելի էր, քան պիկայինը, իսկ ծավալները ավելի բարձր էին: Վրաստանը կարող էր օգտագործել պահուստային ջուրը պիկային ժամերին, նվազեցնելով ներկրման միջին գինը:

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՄԻՋԵՎ ԱՌԵՎՏՐԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Հայաստանն ու Վրաստանը գնահատել են էլեկտրաէներգիայի առևտրի ներուժը և միջհամակարգային կապերի ուժեղացման ծրագրերը: Այդպիսի ծրագրերից է եղել Տետրա Տեկ ընկերության «Հայաստանի Հանրապետության էներգետիկ ոլորտում անվտանգության ամրապնդման և ռեգիոնալ ինտեգրման ծրագիրը» (Tetra Tech/ESRI), որի շրջանակներում ուսումնասիրվել է Վրաստանի հետ սինքրոն աշխատանք իրականացնելու³² և Իրանից 2015-2020 թթ. անջատված լինելու սցենարը: GTMax ծրագրով կատարված բազմընտրանքային հաշվարկների արդյունքում որոշվեցին երկրների միջև հնարավոր փոխհոսքերի ծավալները: Սցենարի տնտեսական արդյունավետությունը ապահովելու համար ծրագրի դրվածքներում ընտրվեց Հայաստանի ներքին սպառողների համար արտադրության գնի չբարձրացման չափանիշը, իսկ առևտրի արդյունավետությունը ապահովում էր այդ գնի նվազեցման չափանիշը: Այդպիսի սահմանափակումներով ստացվեց, որ Հայաստանի առավելագույն արտահանման ծավալը չի գերազանցի տարեկան 830 ԳՎտժ, իսկ ներկրման ծավալը չի գերազանցի 500 ԳՎտժ (առավելագույն հոսքը երկու ուղղություններով չի գերազանցում 900 ՄՎտժ բոլոր սցենարներում):

Արտահանման կառուցվածքում Հայաստանի օգուտը կազմում էր ցածր գնով արտահանումը և ամռանը Հայկական ԱԷԿ-ի կտրուկ բեռնաթափումից խուսափելու պահանջը, ինչը անհրաժեշտ կլիներ Հայաստանի էներգահամակարգի մեկուսացված աշխատանքի դեպքում: Այս պայմանները թույլ կտային, որպեսզի Հայաստանը էլեկտրաէներգիան վաճառի նույնիսկ գիշերային ժամերին, իսկ Վրաստանը լրացուցիչ ջուր պահեստավորի՝ պիկային ժամերին օգտագործելու համար: Ցածր գինը կայունացնում է այդ գործարքները, անկախ այլ նոր արտադրության առկայությունից Վրաստանում:

Արտահանման մեկ այլ հնարավորություն է ձմեռային արտահանումը Հրազդան-5-ից, որը մի քանի բարդությունների հետ է կապված: Առաջինը առաջացել է ռուսական գազի գնի մինչև 15 % բարձրացնելուց հետո, երբ վառելիքային բաղադրիչը հասել է 5.6 ԱՄՆ ցենտ/կՎտժ: Երկրորդը՝ Վրաստանում շահագործման են հանձնվել բարձր

³²Հայաստանի էլեկտրաէներգետիկ համակարգի տնտեսական արդյունավետությունը և Հայաստանում վերականգնվող էներգիայի բնագավառի վրա ազդեցությունների վերլուծությունը, Տետրա Տեկ, 2012թ. Economic Efficiency of Armenia Power System Integration and analysis of impacts on new renewable development in Armenia, TetraTech, 2012

արդյունավետություն ունեցող նոր արտադրական հզորություններ, և երրորդը՝ Թուրքիան դարձել է պոտենցիալ մրցակից իր նոր 670ՄՎտ Դերիներ ՀԷԿ-ի և տարեկան կարգավորմամբ հսկայական ջրամբարի շնորհիվ:

Ի վերջո, գնային մրցունակությունը լինելու է տարածաշրջանում պոտենցիալ գիշերային արտահանման որոշիչ գործոնը: Այսօր Թուրքիան կարող է էլեկտրաէներգիայի բավականին ցածր գին առաջարկել Վրաստանին (4-5 ԱՄՆ ցենտ/կՎտժ), սակայն Վրաստանում ընդունված նախորդ տարիների որոշումները խոչընդոտ են հանդիսանում այդ հարցում: Որոշումների համաձայն էլեկտրաէներգիայի առքուվաճառքի պայմանագրեր են կնքվել նորակառույց էլեկտրակայանների հետ, ինչպիսին է, օրինակ՝ Փառավանի ՀԷԿ-ը, թույլ տալով էլեկտրաէներգիայի արտահանում Թուրքիա: Այսպիսով, այդ կայանից արտահանումը, որը չի գերազանցի 80 ՄՎտ, հանդիսանում է խոչընդոտ ցածր գնով ներկրման համար:

5.2 ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՍԵՉՈՆԱՅԻՆ ՆԵՐԿՐՈՒՄԸ ՎՐԱՏԱՆԻՑ ԵՎ ՕՐԱԿԱՆ ՓՈԽԱՆԱԿՈՒՄԸ

Էլեկտրաէներգիայի ներկրումը Վրաստանից «առատ ջրի» սեզոնին հնարավոր է, հաշվի առնելով Վրաստանից Թուրքիա արտահանման սահմանափակումները: Ներկրումը հնարավոր է գրեթե առանց սահմանափակումների, երբ օրական մատակարարման պայմանները թույլ են տալիս (այն շահավետ է նույնիսկ Վրաստանի բնական ջրահոսքի վրա կառուցված ՀԷԿ-երի համար): Հայաստանի ՋԷԿ-երը կարող են ապահովել էլեկտրաէներգիայի սեզոնային մատակարարումը դեպի Վրաստան՝ ձմռան ամիսներին: Իրենց պարտավորությունները ներքին շուկայում կատարելու նպատակով ՋԷԿ-երը կարող են գործել որպես ներկրողներ: Համապատասխան կանոնակարգերի առկայության դեպքում այդպիսի ներկրումը կարող է շահավետ լինել թե ՋԷԿ-երի և թե Հայաստանի սպառողների համար: Որոշակի ժամանակահատվածում ներկրումը կարող է մրցունակ դառնալ Հայաստանի ներկրման համար, հաշվի առնելով ներքին սպառման պահանջարկի աճը: Հայաստանը կարող է ստանալ լրացուցիչ շահույթ ձմռան ամիսներին օրական փոխանակումից, ստանալով էժան գիշերային էլեկտրաէներգիա Վրաստանից և արտահանելով իր սեփական հավելուրդը դեպի այլ շուկաներ Պիկային ժամերին ավելի թանկ էլեկտրաէներգիան կարելի է մատակարարել Վրաստան:

6. ԵՄ ՊԱՆԱԶՆԵՐԸ ՆԵՐՔԻՆ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐՔԵՏԻԿ ՇՈՒԿԱՅԻ ՀԱՄԱՐ

Եթե Հայաստանը պետք է դառնա էներգետիկ տարածաշրջանային շուկայի մասնակից և առևտրային հարաբերություններ իրականացնի Վրաստանի, Թուրքիայի և այլ երկրների հետ, կպահանջվի ներդնել էներգետիկ շուկայի այնպիսի մոդել, որը կբավարարի ԵՄ ներքին էներգետիկ շուկայի պահանջներին: Հաշվետվության այս բաժնում ամփոփված են էներգետիկ համայնքի մասնակիցների հետ առևտուր իրականացնելու պահանջները: Այդ պահանջները հավասարազոր են ԵՄ ներքին պահանջներին և հետագայում կիրառվելու են որպես հիմք Տարբերությունների վերլուծության համար, ինչը սույն Հաշվետվության նպատակն է հանդիսանում:

Էներգետիկ Համայնքը ընդլայնում է ԵՄ ներքին էներգետիկ շուկան դեպի ԵՄ սահմաններից դուրս գտնվող հարևան երկրներ (իրավահամակարգեր): Էներգետիկ Համայնքի Քարտուղարության *Իրականացման տարեկան հաշվետվությունը*³³ թվագրված սեպտեմբերի 1, 2015 թվական³³, հատկորոշում է Էներգետիկ Համայնքի հիմնական նպատակները հետևյալ կերպ՝

«Էներգետիկ Համայնքի հիմնական նպատակներն են ստեղծել այնպիսի կարգավորման դաշտ և շուկա, որը կնպաստի ներդրումների ներգրավմանը՝ կայուն և շարունակական էլեկտրաէներգիայի մատակարարում ապահովելու նպատակով: Այս մտնեցումը նպաստավոր ճանապարհ է ստեղծում էներգետիկ շուկայի ինտեգրման համար՝ թույլատրելով միջազգային առևտրի իրականացումը և ԵՄ շուկայի հետ ինտեգրումը: Էներգետիկ Համայնքի առաջնային նպատակներից է բարձրացնել էլեկտրամատակարարման անվտանգությունը և մրցակցությունը, ինչպես նաև Պայմանագրային կողմ հանդիսացող երկրներում բարելավել շրջակա միջավայրի վիճակը»:

Համաձայնագիրը, որով հիմնադրվել է Էներգետիկ Համայնքը ստորագրվել է 2005 թվականին և ուժի մեջ է մտել 2006 թվականի հուլիսին: Համաձայնագրի կողմեր են հանդիսանում Եվրոպական Միությունը և ութ պայմանագրային կողմ հանդիսացող երկրներ՝ Ալբանիան, Բոսնիա և Հերցոգովինան, Կոսովոն³⁴, Մակեդոնիան՝ նախկին Հարավսլավիայի Հանրապետություն, Մոնտենեգրոն, Սերբիան և Ուկրաինան³⁵:

³³Տես Էներգետիկ Համայնքի Քարտուղարության 2015 թվականի սեպտեմբերի 1-ի «Ներդրման տարեկան հաշվետվությունը»։ https://www.energy-community.org/portal/page/portal/ENC_HOME/DOCS/3872267/23B450386A075E64E053C92FA8C0F69F.PDF

³⁴ Կոսովոն համաշխարհային հանրության կողմից դեռևս չի ճանաչվել որպես անկախ պետություն:

³⁵ Այս երկրները հանդիսանում են Համաձայնագրի կողմ 2015 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ:

Ներկայումս, ԵՄ 28 անդամ երկրներից 19-ը հանդիսանում են Համաձայնագրի մասնակից, ներառյալ՝ Ավստրիան, Բուլղարիան, Խորվաթիան, Չեխիայի Հանրապետությունը, Կիպրոսը, Ֆրանսիան, Ֆինլանդիան, Գերմանիան, Հունաստանը, Հունգարիան, Իտալիան, Լատվիան, Նիդերլանդները, Լեհաստանը, Ռումինիան, Սլովակիան, Սլովենիան, Շվեդիան և Միացյալ Թագավորությունը: Համաձայնագրի 96-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանը հանդիսանում է Դիտորդ երկիր, ինչպես և Վրաստանը, Նորվեգիան և Թուրքիան: Վրաստանը դիմել է Էներգետիկ Համայնքին լիարժեք անդամ դառնալու խնդրանքով³⁶:

Եվրոպական Հանձնաժողովի Էներգետիկ շուկային վերաբերող դիրեկտիվները հանդիսանում են այն առաջնային հենքը, որոնց շնորհիվ Եվրոպայի Էներգետիկ արդյունաբերությունը փոխակերպվել է: Դիրեկտիվների հիմքում ընկած է մենաշնորհների տարանջատումը, օրինակ՝ այլ գործառույթներից ցանցի շահագործման տարանջատումը՝ ապահովելով երրորդ կողմի հաղորդման ցանց մուտք գործելու իրավունքը, անկախ կարգավորող մարմնի վերահսկումը, ներառյալ՝ միջսահմանային փոխանակումները և առևտուրը, ինչպես նաև սահմանելով, որ բոլոր սպառողներն ունեն իրենց մատակարարին ազատ ընտրելու իրավունք:

Հաշվի առնելով, որ Էներգետիկ Համայնքում ընդգրկված երկրներից շատերը փոքր են, կարծիք կա, որ շուկայի բարդ կառուցվածքը և մրցակցությանը ներկայացվող պահանջները կարող են ծանր բեռ դառնալ այդ երկրների համար: Սակայն հարկ է նշել, որ Էներգետիկ տարածաշրջանային ինտեգրման գործընթացի շրջանակներում իրականացրած ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նվազագույն ծախսերով ներդրումները Եվրոպայի հարավարևելյան երկրների էլեկտրաէներգիա արտադրման և հաղորդման համակարգերում 2005-2020 թվականներն ընդգրկող ժամանակահատվածում կհանգեցնեն 3 միլիարդ եվրոյի խնայողության³⁷: Ստորև նշված են այն բազմաթիվ պոտենցիալ օգուտները, որոնք կստացվեն Եվրոպայի հարավարևելյան հատվածում էլեկտրաէներգիայի առևտրի աճի արդյունքում, ներառյալ՝

- նվազագույն ծախսերով տարածաշրջանային ներդրման ծրագրի համակարգում, մասնավորապես հաշվի առնելով ներդրումների նկատմամբ այդ երկրների պահանջները, որոնք պայմանավորված են պահանջարկի աճով, ինչպես նաև հին և ոչ արդյունավետ արտադրող և հաղորդող ենթակառուցվածքներով,
- քանի որ այս տարածաշրջանի երկրներից մեծ մասը փոքր է, ապա դրանք կարող են առաջնորդվել «արտադրության քանակի աճով պայմանավորված խնայողություն» տնտեսագիտական մոտեցմամբ՝ արտադրանքն ավելի մեծ շուկաներ արտահանելու միջոցով,
- որոշ երկրներում էներգիայի արտահանումը կարող է ապահովել լրացուցիչ հասույթ, և
- մատակարարման բարձր անվտանգություն և տնտեսական արդյունավետություն միջսահմանային առևտրի շրջանակներում:

³⁶ Տես Ծանոթագրություն 38:

³⁷ Արտադրության համակարգում ներդրման ուսումնասիրություն, տես՝ http://siteresources.worldbank.org/INTECAREGTOPPOWER/Home/20551044/Volume%201%20-%20Exec%20sum_final.pdf.

Էներգետիկ Համայնքի Համաձայնագրով սահմանվում են պետական հաստատությունները՝ կարգավորող և տեխնիկական աշխատանքային խմբերի հետ միասին: Էներգետիկ տարածաշրջանային ինտեգրման գործընթացի հիմնական հատկանիշները ներառում են՝

- ժամանակահատվածի ընթացքում մեծածախ և մանրածախ մատակարարման մրցակցություն,
- կարգավորման ընդհանուր դաշտի առկայություն՝ անկախ ազգային կարգավորող մարմիններով,
- ուղղաձիգ ինտեգրացված ընկերությունների տարանջատում,
- գործառույթային առումով և ֆինանսապես տարանջատված հաղորդման ցանցի օպերատորների (ՀՑՕ) առկայություն,
- ԵՄ ավելի լայն ցանցի հետ տարածաշրջանային ինտեգրացված ցանցի ստեղծում, ներառյալ՝ արտադրման, հաղորդող և բաշխման համակարգերի կարգավորման ընդհանուր կանոնների մշակում,
- տարածաշրջանային պլանավորում և մրցունակ ներդրման պայմանների պարզեցում³⁸:

Էներգետիկ Համայնքի Համաձայնագրում ամրագրված նպատակներին հասնելու առումով նշանակալի առաջընթաց է գրանցվել: Էներգետիկ Համայնքի երկրներն ունեն կարգավորման և հաղորդման համակարգերի անկախ օպերատորներ, իսկ որոշ երկրներում, արդեն ստեղծվում են բաշխման համակարգի անկախ օպերատորներ: Էներգետիկ Համայնքի երկրները ներդաշնակեցնում են իրենց տեղական օրենսդրությունները ԵՄ դիրեկտիվները որդեգրող երկրների օրենսդրության հետ՝ մշակելով շուկայի այնպիսի կանոններ, որոնք կնպաստեն մրցակցությանը:

Թեև մեծ աշխատանք է արվել հարավարևելյան Եվրոպան մեծածախ առևտրի մեկ միասնական տարածաշրջանային շուկա ինտեգրելու ուղղությամբ, այնուհանդերձ, դեռ բավականին մեծ աշխատանք է պահանջվում իրականացնել: Ներկայումս պլանավորվում է սպառողների համար ունենալ բաց շուկա (շուկայական ենթակառուցվածքի նկատմամբ բաց հասանելիության ապահովում)՝ մատակարարին ընտրելու հնարավորություն ընձեռնելու նպատակով: Էներգետիկ Համայնքի Քարտուղարության 2015 թվականի սեպտեմբեր ամսվա *Իրականացման տարեկան հաշվետվությունը* (տես՝ վերը բերված հղումը) գնահատում է ստորև բերված տասը համակարգերում Պայմանագրային կողմ հանդիսացող երկրների գրանցած առաջընթացը՝

- Էլեկտրաէներգիա
- գազ
- կարգավորող մարմին
- նավթ

³⁸ Համաձայնագիրը՝ որպես այդպիսին, ներդրում իրականացնելու իրավունք չի ընձեռում:

- վերականգնվող էներգիա
- էներգաարդյունավետություն
- շրջակա միջավայր
- մրցակցություն
- վիճակագրություն
- քննության ընթացքում գտնվող խախտման դեպքեր:

Հաշվի առնելով, որ Քարտուղարությունն է այն կառույցը, որն ի վերջո պատասխանատվություն է կրում որոշելու, թե արդյոք տվյալ երկիրը բավարարում է ԵՄ ներքին Էներգետիկ շուկայի պահանջներին, թե ոչ, տեղին է իրականացնել տարբերությունների վերլուծություն, որը հանդիսանում է սույն Հաշվետվության առարկան, համեմատելով Քարտուղարության սահմանած չափանիշները Հայաստանում գործող չափանիշների հետ: Քարտուղարության չափանիշների համառոտ նկարագրությունը կիրառվել է դիտարկելու յուրաքանչյուր Պայմանագրային կողմ հանդիսացող երկրի համապատասխանության աստիճանը, որը ներկայացված է ստորև: Սակայն, հարկ է նշել, որ նավթը և գազը նշված նկարագրությունում ներառված չեն, ներառված չեն նաև քննության ընթացքում գտնվող խախտումների դեպքերը, ուստի դրանք ևս բացակայում են սույն Հաշվետվությունից³⁹:

6.1 ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱ

Էլեկտրաէներգիայի մասին օրենսդրությունն ուղղված է էլեկտրաէներգետիկ համակարգում մրցակցային շուկաների ստեղծմանը, որոնք պետք է լինեն անաչառ, թափանցիկ և անկողմնակալ: Պայմանագրային կողմ հանդիսացող երկրների համար բաց շուկա մտնելու վերջնաժամկետը սահմանվել էր 2015 թվականի հունվարի 1-ը, սակայն նրանցից մեծ մասն այն բաց է թողել:

1. **Թույլտվություն.** Վերաբերում է առանց կոնցեսիաների նոր արտադրական հզորությունների համար թույլտվության շնորհմանը՝ անկախ կառույցի միջոցով.
2. **Տարանջատում.** Վերաբերում է արտադրման, հաղորդման, հաղորդման համակարգի շահագործման, բաշխման համակարգի շահագործման և մատակարարման տարանջատմանը: Հաղորդման համակարգի շահագործումը պետք է օրենքով տարանջատվի.

³⁹ Էներգետիկ համակարգի գործունեության նկատմամբ ԵՄ նաև սահմանել է տեխնիկական պահանջներ, որոնք ներկայացված են Շահագործման ձեռնարկում: Ըստ այս պահանջների՝ երկրների էլեկտրաէներգիայի մատակարարման ստանդարտները համապատասխանեցվում են արդյունավետության նվազագույն պահանջների հետ՝ նվազեցնելով խափանման հնարավորությունը մի երկրում, հետևաբար և այլ հարևան երկրներում: Սույն Հաշվետվության թիրախը շուկայի մոդելների և շուկայի կանոնների ներդաշնակեցումն է: Հայաստանի և Վրաստանի տեխնիկական տարբերություններն, ըստ գնահատականների, էական չեն: Ուստի, հետագայում բարձր լարման հաստատուն հոսանքի փոխակերպիչ կայանի կառուցումը երկու երկրներին թույլ կտա շահագործումն իրականացնել ոչ սինխրոն ռեժիմով՝ դրանով իսկ Վրաստանին զերծ պահելով Հայաստանի համակարգի խափանումներից (և հակառակը):

3. **Երրորդ կողմի հասանելիություն.** Վերաբերում է անաչառ և անկողմնակալ ցանց մուտք գործելու իրավունքի պարտադիր տրամադրմանը: Ցանցի սակագները սահմանվում և հրապարակվում են կարգավորող մարմնի կողմից, որը համանման ծառայությունների համար պետք է սահմանի համանման գներ: Անհրաժեշտ է մշակել հաղորդման ցանցում էլեկտրաէներգիայի կուտակմանը վերաբերող և այն գնորոշելու մեթոդոլոգիա, և ապահովել միջհամակարգային կապերին հաղորդման հզորության բաշխման թափանցիկությունը.
4. **Իրավասություն.** Վերաբերում է բոլոր սպառողներին մատակարարներին ընտրելու իրավունքի տրամադրմանը, մասնավորապես Պայմանագրի կողմ հանդիսացողներին.
5. **Շուկայի բացում և գնային կարգավորում.** Վերաբերում է մեծածախ և մանրածախ շուկայի բացմանը՝ աստիճանաբար մրցունակ դարձնելու նպատակով: Այս կետի դրույթները հնարավորություն են տալիս «վերջին հանգույցի մատակարարին» (supplier of the last resort) էլեկտրաէներգիա մատակարարել այն սպառողներին, որոնք չեն իրացնում մատակարար ընտրելու իրենց իրավունքը (կամ կորցրել են իրենց մատակարարին այդ բիզնեսից վերջինիս դուրս գալու պատճառով).
6. **Հավասարակշռում/բալանսավորում.** Վերաբերում է պայմանագրով ամրագրված քանակի և փաստացի առաքված և սպառված քանակի միջև մատակարարման և գնային շեղումներին, ներառյալ՝ միջսահմանային գործարքները: Անհրաժեշտ է մշակել դրույթներ հավասարակշռելու ներգրավված խմբերը, հավասարաչափ բաժանելու պատասխանատվության աստիճանը և հստակեցնելու կանոնները՝ հիմք ընդունելով անաչառությունը, թափանցիկությունը և անկողմնակալությունը
7. **Սպառողների պաշտպանություն, խոցելի սպառողների պաշտպանություն.** Վերաբերում է սպառողների իրավունքներին և պարտականություններին: Անհրաժեշտ է հատկորոշել և սահմանել խոցելի սպառողներին, մշակել նրանց աջակցելու մեխանիզմներ՝ սուբսիդավորումը ֆինանսավորելու աղբյուրներ գտնելու միջոցով:

Հայաստանը ընդհանուր առմամբ վերտիկալ պահանջներից ոչ մեկին չի համապատասխանում: ՀԿ-ն, ԷԲՊՆ-ն և ՀԾԿՀ-ն նոր արտադրական հզորությունների համար թույլտվություն են շնորհում և կարող են ներառել կոնցեսիաներ: Բաշխման ոլորտը չի բաժանվել ԲՏՕ-ի և Մատակարարի ֆունկցիաների, սպառողները չունեն մատակարարման ընտրություն: Շուկան բաց չէ մրցակցության համար: Ներկայումս գոյություն չունեն հստակ կանոններ, որոնք կերաշխատիրեն երրորդ անձանց մուտքը հաղորդման և բաշխման ցանցեր: Բալանսավորումը չի հանդիսանում առանձին ֆունկցիա, քանի որ չկան պայմանագրային քանակներ: Ամբողջ բալանսավորումը կատարվում է ՀԱՕ-ի կողմից՝ ԲՏՕ-ի համագործակցությամբ, իսկ դրա դիմաց ծախսերը ներառված են սակագնում: Միակ չափանիշը, որը մասնակիորեն բավարարում է ԵՄ պահանջներին, ՀԿ-ի կողմից կիրառվող մեխանիզմն է, որը ուղղված է պաշտպանելու խոցելի սպառողներին նպատակային և «փորձարկված» սոցիալական ծրագրերի միջոցով:

6.2 ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄԻՆ

8. **Կարգավորում.** Վերաբերում է էներգետիկ համակարգը կարգավորելու նպատակով մեկ մարմնի ստեղծմանը: «ԵՄ Էներգիայի 3-րդ փաթեթ» կոչվող օրենսդրական փաթեթը կարգավորողի նկատմամբ սահմանում է մի շարք պահանջներ: Այդ մարմինը պետք է ունենա խորհուրդ (բաղկացած հինգ անդամից), որը պետք է գործի ծառայության սահմանված ժամկետում (հինգ տարի՝ մեկ անգամ վերընտրվելու հնարավորությամբ) և, որի անդամների նկատմամբ պետք է սահմանված լինեն որակավորման հստակ պահանջներ: Անդամների նշանակումների նկատմամբ պահանջվում է կիրառել ռոտացիոն սկզբունքը, իսկ թափուր տեղերի համար պահանջվում է ներկայացնել հրապարակային հայտարարություն: Հանձնաժողովի անդամների պաշտոնանկության պայմանները պետք է հստակ հատկորոշվեն (շահերի բախում, քրեաձին գործունեության իրականացում)՝ նվազեցնելու հնարավոր քաղաքական միջամտությունը: ԵՄ Էներգիայի 3-րդ փաթեթը սահմանում է կարգավորող մարմինների իրավասության շրջանակները, կարգավորող մարմնի պարտականությունները՝ համապատասխանելու Էներգետիկ Համայնքի Կարգավորող խորհրդի որոշումներին, և առաջարկություններ ներկայացնելու իրավունքը (հանրային ծառայության պարտականության հետ (PSO) մատակարարման գների համապատասխանության, ինչպես նաև մրցակցությունը խթանող գործողությունների իրականացման վերաբերյալ և այլն): Ի լրումն նշվածի, ԵՄ Էներգիայի երրորդ փաթեթը ներառում է նաև տույժերի այն չափը, որոնք կարող են կիրարկվել կարգավորողի կողմից: Կարգավորող մարմինը պետք է իրավունք ունենա ինքնուրույն և անկախ ընդունել օրենքի ուժ ունեցող որոշումներ, որոնք, սակայն, պետք է ունենան դատարանում վիճարկելու հնարավորություն: Այս դեպքում, կարգավորող մարմինը պետք է կարողանա պաշտպանել իր որոշումները գրավոր եղանակով: Կարգավորող մարմինը պետք է լինի անկողմնակալ և թափանցիկ, իրականացնի հանդիպումներ հասարակության հետ և հրապարակի իր կողմից ընդունված որոշումները: Կարգավորող մարմնի որոշումները պետք է արտացոլեն հասարակության և այլ շահառուների շահերը: Կարգավորող մարմնի ղեկավարությունը պետք է լինի անկախ: Ազգային կարգավորող մարմինները պետք է ակտիվ լինեն տարածաշրջանային մակարդակում:

Հիմնականում Հայաստանը բավարարում է ԵՄ պահանջներին, քանի որ Հայաստանում գործում է մեկ կարգավորող մարմին, որն անկախ է և գործում է առանց քաղաքական միջամտության: Կարգավորող մարմինն ունի Հանձնաժողովի անդամների խորհուրդ կոնկրետ սահմանված ծառայության ժամկետով և անդամների նկատմամբ որակավորման հստակ պահանջներով, սակայն առանց վերընտրման սահմանափակման: Կարգավորող մարմինն իր բյուջեի կատարման հարցում անկախ չէ և իր պարտականությունները իրականացնելու համար չունի մարդկային և ֆինանսական համապատասխան միջոցներ:

6.3 ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԻԱ

Մինչև 2020 թվականը Պայմանագրային կողմ հանդիսացող երկրների կողմից էլեկտրաէներգիայի, տաքացման և հովացման, ինչպես նաև տրանսպորտի համակարգերում վերականգնվող էներգիայի օգտագործման միասնական նպատակին

հասնելու համար ամրագրված է կիրառել մեկ միասնական մեթոդոլոգիա, որը ներկայացված է ԵՄ անդամ երկրներին:

9. **Վերականգնվող էներգիայի Գործողությունների ծրագիր.** Վերաբերում է երկրի կողմից Վերականգնվող էներգիայի գործողությունների ազգային ծրագիր ընդունելու պահանջին.
10. **Օժանդակող սխեմաներ.** Վերաբերում է վերականգնվող էներգիայի լայնածավալ աղբյուրների կիրառումն օժանդակելու պահանջին, ինչպիսիք են քամին, կենսաբանական զանգվածը, արևը, ինչպես նաև, ի լրումն էլեկտրաէներգիայի համակարգի, այդ աղբյուրների կիրառումը նաև տաքացման և հովացման, տրանսպորտի համակարգերում օժանդակելու պահանջին.
11. **Համագործակցության մեխանիզմներ.** Վերաբերում է երկրի և Պայմանագրային կողմ հանդիսացող կամ ԵՄ անդամ երկրի միջև համագործակցության մեխանիզմների մշակմանը՝ իրականացնելու ԵՄ կողմից սահմանված մինչև 2020 թվականի նպատակները.
12. **Վարչական ընթացակարգեր.** Վերաբերում է վերականգնվող էներգիայի աղբյուրների կիրառմամբ շահագործվող էլեկտրաէներգիայի նոր կայանների կառուցման լիցենզավորման ընթացակարգերին, այդ թվում այն հաստատությունների հատկորոշմանը, որոնք կարող են «մեկ պատուհանի սկզբունքով» իրականացնել վերականգնվող էներգիայի ծրագրերի դիմումների վարման ընթացակարգը՝ ի շահ ներդրողների: Անհրաժեշտ է մշակել դիմումները վարելու հստակ սահմանված և պարզեցված ընթացակարգեր.
13. **Մուտք/հասանելիություն Ցանցին.** Վերաբերում է Ցանցին վերականգնվող էներգիայի աղբյուրների կիրառմամբ շահագործվող կայաններին առաջնային և երաշխավորված մուտքի տրամադրմանը՝ առաջնային կարգավարմամբ: Ցանցին միանալու ծախսերի որոշման մեթոդոլոգիան պետք է լինի թափանցիկ.
14. **Ծագման երաշխիք.** Վերաբերում է վերականգնվող էներգիայի աղբյուրների վերաբերյալ Ծագման երաշխիքի տրամադրմանը, փոխանցմանը և չեղարկմանը: Ծագման երաշխիքը Եվրամիության օրենսդրության կողմից սահմանված մի գործիք է, որը հանդիսանում է էլեկտրաէներգիայի պիտակ և թույլ է տալիս սպառողին տեղեկացնել իրեն վաճառվող էլեկտրաէներգիայի աղբյուրի մասին: Ծագման երաշխիքի միջոցով արտադրողը հավաստիացնում է, որ գնված էլեկտրաէներգիան «կանաչ» է (արտադրված է վերականգնվող աղբյուրներից), այլապես ԾԵ-ն հանվում է շրջանառությունից և չեղարկվում:
15. **Վերականգնվող էներգիան տրանսպորտում.** Վերաբերում է մինչև 2020 թվականը տրանսպորտի համակարգում վերականգնվող էներգետիկայի նկատմամբ սահմանված նպատակները բավարարելու համար դրանց զարգացմանը և պլանավորմանը՝ համապատասխանելու ԵՀ 2009/28 Դիրեկտիվին: Նշված ծրագիրը պետք է սահմանի ռեժիմի կենսունակությունը և հաստատման/թույլտվության գործընթացը՝ հաստատող մարմնի հետ միասին:

Հայաստանն ունի Վերականգնվող էներգիայի ազգային ծրագիր և համագործակցության մեխանիզմներ մինչև 2020 թվականը ԵՄ նպատակներին հասնելու համար: Հայաստանն օժանդակում է ՎԷ բազմաթիվ աղբյուրների զարգացմանը և ՎԷ կայաններին տրամադրում է ցանցին երաշխավորված մուտքի իրավունք՝ առաջնահերթ կարգավարմամբ: Ցանցին միանալու մեթոդորոգիան թափանցիկ է: Սակայն Հայաստանը դեռևս չի ամրագրել կառույց, որը կիրականացնի ՎԷ լիցենզավորումը «մեկ պատուհանի սկզբունքով»: Հայաստանը չի տրամադրում, փոխանցում կամ չեղարկում ՎԷ աղբյուրի երաշխիք: Հայաստանը չունի տրանսպորտի համակարգում մինչև 2020 թվականը ՎԷ-ի հետ կապված ԵՄ-ի պահանջները բավարարելու ծրագիր:

6.4 ԷՆԵՐԳԱՎՐԳՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ

Էներգաարդյունավետության գործողությունների ազգային ծրագրերի մշակումը պահանջ է, պահանջ է նաև մշակել օրենսդրական դաշտ նոր և գոյություն ունեցող շենքերի նկատմամբ ԷԱ նվազագույն պահանջեր սահմանելու, ինչպես նաև էներգիա սպառող կենցաղային ապրանքների պիտակավորման և դրանց կողմից էներգիայի սպառման մասին տեղեկատվություն ներկայացնելու վերաբերյալ: Եթե ընդունվի ԷԱ-ի մասին դիրեկտիվը, ապա դրանով կսահմանվեն ԷԱ միասնական և պարտադիր նպատակները՝ համաձայն որոնց, մինչև 2020 թվականը Էներգետիկ Համայնքում էներգիայի տարեկան սպառումը պետք է նվազի 20%-ով:

16. **Էներգետիկ ծառայությունների ԵՀ Դիրեկտիվ 2006/32.** Վերաբերում է էներգաարդյունավետության մասին օրենքի ընդունմանը.

17. **Էներգետիկ պիտակավորման ԵՀ Դիրեկտիվ 2010/30.** Վերաբերում է էներգիայի սպառման և էներգիա սպառող ապրանքների կողմից այլ միջոցների սպառման վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու մասին (կենցաղային սարքավորումների պիտակավորում, շենքերի էներգաարդյունավետություն) օրենքի ընդունմանը: ԷԱ քաղաքականության կիրառումը պահանջում է ինստիտուցիոնալ լավ մշակված դաշտի առկայություն և ֆինանսական ապահովվածություն:

Հայաստանն ունի Էներգաարդյունավետության մասին օրենք: Հայաստանը չունի ԷԱ մասին տեղեկատվության ներկայացումը կարգավորող օրենք, ինչպիսիք են կենցաղային սարքավորումների պիտակավորումը, շենքերի էներգաարդյունավետությունը և այլն:

6.5 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ

Նախքան շենքի կառուցման կամ շահագործման թույլտվություն ստանալը՝ խիստ անհրաժեշտ է ծրագրերի բնապահպանական հետևանքների հատկորոշումը և գնահատումը: Ծծմբի պարունակությունը վառելիքում Դիրեկտիվում ծծմբի սահմանված առավելագույն թույլատրելի քանակն ապահովում է ծծումբի երկօքսիդի (SO₂) արտանետումների ռիսկերի արդյունավետ պահպանումը: Պայմանագրային կողմ հանդիսացող բոլոր երկրները՝ բացառությամբ Կոսովոյի, ընդունել են Կիոտոյի արձանագրությունը: Խոշոր այրման կայանների Դիրեկտիվի նպատակն է նվազեցնել թթու պարունակող (օքսիդային) աղտոտիչների, մասնիկների և օզոնային պրեկուրսորների

արտանետումները: Սույն Դիրեկտիվի պահանջներն ամբողջությամբ պետք է կիրառվեն 2018 թվականից հետո կառուցվող կայանների նկատմամբ: Մինչդեռ, արդեն գործող կայանների նկատմամբ Պայմանագրային կողմ հանդիսացող երկրները մինչև ամենաուշը 2028 թվականի հունվար ամիսը պետք է կիրառեն ստորև նշված դիրեկտիվների դրույթները՝

18. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման Դիրեկտիվ.

Վերաբերում է օրենսդրական և վարչական միջոցառումների ընդունմանը՝ ապահովելու, որ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումներն իրականացվում են արդյունավետ վերահսկողություն ունեցող շինարարական նոր խոշոր ծրագրերի վերաբերյալ.

19. Ծծմբի պարունակությունը վառելիքում Դիրեկտիվ. Վերաբերում է ծանր հեղուկ վառելիքի կիրառման արգելքին, եթե դրանում ծծմբի պարունակությունը գերազանցում է զանգվածի 1,00%-ը, իսկ գազային վառելիքինը, եթե ծծմբի պարունակությունը գերազանցում է վառելիքի զանգվածի 0,1% -ը.

20. Խոշոր այրման կայանների Դիրեկտիվ. Վերաբերում է խոշոր այրման կայանների արտանետումներին վերաբերող դրույթների բավարարմանը և կիրարկմանը:

Հայաստանը ունի օրենսդրական դաշտ և վարչական ընթացակարգեր՝ ապահովելու շրջակա միջավայրի վրա կառուցվող նոր շինությունների ազդեցության գնահատման իրականացումը: Այնուհանդերձ, Հայաստանը չունի էներգետիկ կայանների արտանետումները սահմանափակող դրույթներ և չունի վառելիքում ծծմբի պարունակության սահմանաչափին ամրագրող նորմ:

6.6 ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Մրցակցության ապահովման երեք հիմնական անկյունաքարերն են՝ 1. հակամրցակցային համաձայնությունների արգելումը, 2. շուկայում գերիշխող դիրքի չարաշահման արգելումը, և 3. պետական օժանդակության արգելումը: Հանրային հատվածում իրականացվող գործողությունները նույնպես պետք է համապատասխանեն վերը նշված կանոններին: Պայմանագրային կողմ հանդիսացող երկրներից պահանջվում է ունենալ կարտելները (ձեռնարկությունների միջև համաձայնություններ, ձեռնարկությունների ասոցիացիաների կողմից ընդունված որոշումներ և համաձայնեցված գործելակերպ), գերիշխող դիրքի չարաշահումը և պետական օժանդակությունն արգելող օրենսդրություն:

21. Մրցակցության մասին օրենք. Վերաբերում է ազատ և բաց մրցակցության ապահովմանը և շուկայի իշխանության չարաշահման արգելքին, ներառյալ՝ տույժերի գնահատումը, երբ որոշվում է, որ կազմակերպությունը ցուցաբերում է հակամրցակցային վարքագիծ: Մրցակցություն ապահովող կանոնները պետք է ներառեն այնպիսի մեթոդոլոգիաներ և տնտեսական վերլուծություններ, որոնք հնարավորություն կտան գնահատելու մրցակցության կանոնների խախտման դեպքերը:

22. Պետական օժանդակության մասին օրենք. Վերաբերում է ինստիտուցիոնալ այնպիսի կառուցվածքի և կիրարկման մեխանիզմների ներդրմանը, որոնք կապահովեն մրցակցության մասին օրենքը խախտելու դեպքում համապատասխան միջոցառումների իրականացումը.

Հայաստանը չունի մրցակցության մասին օրենք, որով կասահմանվեին ազատ և բաց մրցակցության կանոնները էներգետիկայի բնագավառում: Հայաստանը չունի էներգետիկայի բնագավառում մրցակցության մասին օրենքի խախտման դեպքերը կարգավորելու ինստիտուցիոնալ կառուցվածք և կիրարկման մեխանիզմներ:

6.7 ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Էներգետիկ Համայնքի Վիճակագրության մասին օրենսդրությունն ապահովում է էներգետիկ տվյալների հետևողական, ճշգրիտ և հաջորդական հավաքագրումը, կոմպիլյացիան և ներկայացումը: Տարեկան և ամսական վիճակագրությունը պետք է իրականացվի Եվրոպական Միության Վիճակագրության գրասենյակի (EUROSTAT) և Էներգետիկ միջազգային գործակալության (IEA) կողմից մշակված մեթոդոլոգիայի համաձայն: Գնի վերաբերյալ վիճակագրական տվյալները ևս պետք է կազմվեն հիմնվելով EUROSTAT-ի կանոնների և մեթոդոլոգիայի վրա:

23. Էներգետիկ տարեկան վիճակագրություն. Վերաբերում է էներգետիկ տարեկան հաշվեկշռի և հարցաշարերի հրապարակմանը: Երկիրը պետք է ընդունված մեթոդոլոգիաների և ընթացակարգերի համաձայն EUROSTAT-ին ներկայացնի տարեկան հարցաշարեր հիմնականում էներգիայի սպառման և վերականգնվող էներգիայի վերաբերյալ.

24. Էներգետիկ ամսական վիճակագրություն. Վերաբերում է էներգիայի վերաբերյալ ամսական վիճակագրական տվյալներ պատրաստելու և ներկայացնելու պարտավորությանը: Նշվածը պահանջում է մարդկային և ֆինանսական համապատասխան միջոցների առկայություն, ինչպես նաև վարչական հստակ ընթացակարգեր՝ հաշվետու գործակալությունների պարտականությունները կատարումը հսկելու նպատակով.

25. Գնի վերաբերյալ վիճակագրություն. Վերաբերում է բոլոր կարգի վերջնական սպառողներից գանձվող էլեկտրաէներգիայի սակագների և գումարների վերաբերյալ տեղեկատվության հրապարակմանը և ներկայացմանը՝ EUROSTAT-ի կողմից սահմանված մեթոդոլոգիայի համաձայն :

Հայաստանը ԱՄՆ ՄՉԳ-ի աջակցությամբ պատրաստել է 2010-2012 թվականների էներգետիկ հաշվեկշիռները՝ EUROSTAT-ին և միջազգային պրակտիկայում ընդունված մեթոդոլոգիաներին համապատասխան: 2016 թ. սկսած ՀՎԷԽՀ-ն հավաքագրելու և ԷԲՊՆ-ին է տրամադրելու էներգետիկ հաշվեկշիռների համար տվյալներ, իսկ հետագա տարածման նպատակով դրանք կտրամադրվեն ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն: Հայաստանը հրապարակում և ներկայացնում է տեղեկատվություն էլեկտրաէներգիայի սակագների և սպառողներից գանձվող գումարների վերաբերյալ, սակայն ոչ EUROSTAT-ի կողմից ընդունված մեթոդոլոգիաներին համապատասխան: Բացի այդ, Հայաստանը չի պատրաստում և ներկայացնում էներգետիկ ամսական վիճակագրական տվյալներ:

7. ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (GAP) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ինչպես արդեն նշվել է սույն Հաշվետվությունում, Հայաստանի էներգետիկ շուկան մրցունակ չէ: Թեև տեղի է ունեցել համակարգի որոշակի տարանջատում, այնուամենայնիվ, Հայաստանի էներգետիկ շուկան շարունակում է համարվել մենաշնորհի «միակ գնորդի» մոդելի կառուցվածքով: Հաշվի առնելով, որ մեծածախ և մանրածախ մատակարարման համակարգում *Էներգետիկ Համայնքի համաձայնագրի*, ինչպես նաև էներգետիկ ինտեգրման գործընթացի շրջանակներում մրցակցությունը հանդիսանում է կարևորագույն հատկանիշ, զարմանալի չէ, որ Հայաստանի էներգետիկ համակարգն ի վիճակի չէ բավարարելու այդ պահանջները: Նշվածը հստակ ներկայացված է ստորև բերված Աղյուսակ 4-ում, որտեղ Հայաստանի էներգետիկ համակարգի օրենսդրական դաշտը և շուկայի կառուցվածքը ամփոփ համեմատվում է Քարտուղարության գնահատման չափանիշների հետ:

Աղյուսակ 4 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕՐԵՆՍԴՐԱՎԱՆ ԴԱՇՏԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՄ ՆԵՐՔԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՇՈՒԿԱՅԻ ԴԱՎԱՆՋՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (GAP) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

	Չափանիշ	Իրավիճակը Հայաստանում	Տարբերություն
Էլեկտրաէներգիա			
1	Առանց կոնցեսիաների նոր արտադրական հզորությունների թույլտվություն	ՀՀ կառավարությունը, ՀՀ ԷԼԲՊՆ-ն և Կարգավորող մարմինը տրամադրում են նոր արտադրական հզորությունների թույլտվություններ, որոնք կարող են ներառել կոնցեսիոն հարաբերություններ	ՉԲ
2	Սեփականության տարանջատում	Մասնակի տարանջատում, սակայն բաշխումը ԲՅՕ-ից և Մատակարարից չի տարանջատված	ՉԲ
3	Երրորդ կողմի հասանելիություն	Ներկայումս հաղորդման և բաշխիչ ցանցերին երրորդ կողմի հասանելիությունն ապահովող որևէ կանոն մշակված չէ	ՉԲ
4	Իրավասություն՝ բոլոր սպառողներին մատակարար ընտրելու իրավունքի տրամադրում	Ոչ մի սպառող մատակարար ընտրելու հնարավորություն չունի	ՉԲ
5	Շուկայի բացում մրցակցություն ապահովելու նպատակով՝	Շուկան մրցակցային չէ: ԲՅՕ-ն հանդիսանում է «վերջին հանգույցի»	ՉԲ

	հնարավորություն տալով «վերջին հանգույցի մատակարարին» (SoLR) և ստաջարկել իր ծառայությունները	մատակարարը՝ հանդիսանալով նաև միակ մատակարարը: Սպառողները մատակարարը նտրելու հնարավորություն չունեն:	
6	Պայմանագրով ամրագրված և փաստացի առաքված քանակի միջև շեղումների հավասարակշռում/բալանսավորում	Բալանսավորումն առանձին գործիք չի հանդիսանում, քանի որ պայմանագրով ամրագրված քանակ գոյություն չունի: Բալանսավորումն իրականացվում է ՀԱՕ-ի կողմից՝ ԲՅՕ-ի համագործակցությամբ, իսկ ծախսերը ներառվում են սակագնում:	ԶԲ
7	Սպառողների և խոցելի սպառողների պաշտպանություն	Սպառողներն ունեն մի շարք իրավունքներ: Սակայն, կարգավորման նորմեր, որոնք հստակ կպաշտպանեն խոցելի սպառողներին չկան: Այնուհանդերձ, ՀՀ կառավարությունը կիրառում է տարբեր մեխանիզմներ նման սպառողներին նպատակային և «փորձարկված» սոցիալական ծրագրերի միջոցով պաշտպանելու համար:	ՄԲ
Կարգավորող մարմին			
8	Էներգետիկ համակարգի մեկ կարգավորող մարմին	Հիմնականում Հայաստանը բավարարում է ԵՄ պահանջներին, քանի որ Հայաստանում գործում է մեկ կարգավորող մարմին, որն անկախ է և գործում է առանց քաղաքական միջամտության: Կարգավորող մարմինն ունի Հանձնաժողովի անդամների խորհուրդ կոնկրետ սահմանված ծառայության ժամկետով և անդամների նկատմամբ որակավորման հստակ պահանջներով: Կարգավորող մարմինն ի պաշտոնե կոչված է կարգավորելու համակարգը, որոշակի բացառություններով. <ul style="list-style-type: none"> • Էներգետիկայի մասին ՀՀ օրենքով կարգավորող մարմնի պատասխանատվության շրջանակն ավելի քիչ է քան ԵԽՍ 2009/72 Դիրեկտիվն է սահմանում, • կարգավորող մարմինն իր բյուջեի կատարման հարցում անկախ չէ և իր պարտականությունները 	ՄԲ

		<p>իրականացնելու համար չունի մարդկային և ֆինանսական համապատասխան միջոցներ,</p> <ul style="list-style-type: none"> կարգավորող մարմնի խորհրդի անդամները նշանակվում են հինգ տարի ժամկետով առանց որևէ վերընտրման սահմանափակման: 	
Վերականգնվող էներգիա			
9	Վերականգնվող էներգիայի գործողությունների ծրագիր	Հայաստանն ունի Վերականգնվող էներգիայի ազգային ծրագիր:	ԸՔ
10	ՎԷ իրանող օժանդակող սխեմաներ	Հայաստանն օժանդակում է ՎԷ բազմաթիվ աղբյուրների զարգացմանը:	ԸՔ
11	Համագործակցություն երկրի և պայմանագրային կողմ հանդիսացող երկրների միջև	Հայաստանը մշակել է համագործակցության մեխանիզմներ մինչև 2020 թվականը ԵՄ նպատակներին հասնելու համար:	ԸՔ
12	ՎԷ լիցենզավորելու վարչական ընթացակարգեր	Հայաստանը դեռևս չի ամրագրել կառույց, որը կիրականացնի ՎԷ լիցենզավորումը «մեկ պատուհանի սկզբունքով»:	ՉՔ
13	Ցանցային առաջնահերթ մուտքի ապահովում	Հայաստանը ՎԷ կայաններին տրամադրում է ցանցին երաշխավորված մուտքի իրավունք՝ առաջնահերթ կարգավարմամբ: Ցանցին միանալու մեթոդոլոգիան թափանցիկ է:	ԸՔ
14	Աղբյուրի երաշխիք	Հայաստանը չի տրամադրում, փոխանցում կամ չեղարկում ՎԷ աղբյուրի երաշխիք:	ՉՔ
15	ՎԷ տրանսպորտում	Հայաստանը չունի տրանսպորտի համակարգում մինչև 2020 թվականը ՎԷ-ի հետ կապված ԵՄ-ի պահանջները բավարարելու ծրագիր:	ՉՔ
Էներգաարդյունավետություն			
16	Էներգաարդյունավետության մասին օրենքի ընդունում	Հայաստանն ունի Էներգաարդյունավետության մասին օրենք:	ԸՔ
17	Էներգաարդյունավետության վերաբերյալ տեղեկատվության	Հայաստանը չունի Էներգաարդյունավետության մասին տեղեկատվության ներկայացումը կարգավորող օրենք, ինչպիսիք են	ՉՔ

	ներկայացման մասին օրենքի ընդունում	կենցաղային սարքավորումների պիտակավորումը, շենքերի էներգաարդյունավետությունը և այլն:	
Շրջակա միջավայր			
18	Օրենսդրական դաշտի մշակում՝ ապահովելու շրջակա միջավայրի վրա նոր շինությունների ազդեցության գնահատումը	Հայաստանում ունի օրենսդրական դաշտ և վարչական ընթացակարգեր՝ ապահովելու շրջակա միջավայրի վրա կառուցվող նոր շինությունների ազդեցության գնահատման իրականացումը:	ՉԲ
19	Ծծումբի պարունակությունը վառելիքում	Հայաստանը չունի վառելիքում ծծմբի պարունակության սահմանաչափն ամրագրող նորմ:	ՉԲ
20	Էներգետիկ կայանների արտանետումները սահմանափակող դրույթներ	Հայաստանը չունի էներգետիկ կայանների արտանետումները սահմանափակող դրույթներ:	ՉԲ
Մրցակցություն			
21	Ազատ և բաց մրցակցության ապահովում, շուկայում իշխող դիրքի չարաշահման արգելում	Հայաստանը, որպես այդպիսին, չունի մրցակցության մասին օրենք, որով կսահմանվեին ազատ և բաց մրցակցության կանոնները էլեկտրաէներգետիկ ոլորտում:	ՉԲ
22	Ինստիտուցիոնալ կառուցվածքի և կիրարկման մեխանիզմների մշակում և ներդրում՝ ապահովելու մրցակցության մասին օրենքի խախտման դեպքերի կարգավորումը	Հայաստանը չունի էլեկտրաէներգետիկ ոլորտում մրցակցության մասին օրենքի խախտման դեպքերը կարգավորելու ինստիտուցիոնալ կառուցվածք և կիրարկման մեխանիզմներ:	ՉԲ
Վիճակագրություն			
23	Էներգետիկ տարեկան հաշվեկշռի հրապարակում	Հայաստանը ԱՄՆ ՄՁԳ-ի աջակցությամբ ⁴⁰ պատրաստել է 2010-2012 թվականների էներգետիկ հաշվեկշիռները՝ EUROSTAT-ին և միջազգային պրակտիկայում ընդունված մեթոդոլոգիաներին համաատասխան: 2016 թ. սկսած ՀՎԷԷԽՀ-ն հավաքագրելու և ԷԲՊՆ-ին է տրամադրելու էներգետիկ հաշվեկշիռների համար տվյալներ, իսկ հետագա տարածման նպատակով դրանք կտրամադրվեն	ՄԲ

⁴⁰ <http://energybalancearmenia.am/>

		ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն:	
24	Էներգետիկ ամսական վիճակագրական տվյալների պատրաստում և ներկայացում	Հայաստանը չի պատրաստում և ներկայացնում Էներգետիկ ամսական վիճակագրական տվյալներ: Հայաստանը հրապարակում և ներկայացնում է տեղեկատվություն էլեկտրաէներգիայի սակագների և սպառողներից գանձվող գումարների վերաբերյալ, սակայն ոչ EUROSTAT-ի կողմից ընդունած մեթոդոլոգիաներին համապատասխան:	ՉԲ
25	Էլեկտրաէներգիայի սակագների և գների հրապարակում և ներկայացում		ՄԲ
<p>ՉԲ – չի բավարարում ԵՄ չափանիշներին</p> <p>ՄԲ – մասնակիորեն բավարարում է ԵՄ չափանիշներին</p> <p>ԸԲ – ընդհանուր առմամբ բավարարում է ԵՄ չափանիշներին</p>			

8. ՇՈՒԿԱՅԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԵՎ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ

Թեև Հայաստանում բացի վերականգնվող էներգիայի և էներգաարդյունավետության ոլորտներից, կարգավորվող համակարգերը, իսկ ավելի պակաս արդյունաբերությունը տարանջատված են, այնուհանդերձ, Հայաստանը դեռ շատ հեռու է ԵՄ Ներքին էներգետիկ շուկայի պահանջները բավարարելուց: ԵՄ պահանջների բավարարումն անհրաժեշտ է, այլապես Հայաստանը չի կարողանա քաղել Ներքին էներգետիկ շուկայի մաս կազմող երկրների հետ առևտրային հարաբերություններից բխող օգուտները: Ինչպես արդեն նշվել է վերը, Հայաստանի և Վրաստանի միջև առկա են առևտրային հարաբերություններ սկսելու հնարավորություններ, որը նաև կապված է Հայաստանի և Թուրքիայի միջև առկա քաղաքական անհամաձայնությունները հարթելու հետ: Հաշվի առնելով այն, որ և Վրաստանը, և Թուրքիան ունեն ԵՄ Ներքին էներգետիկ շուկա մուտք գործելու ծրագրեր, Հայաստանից նույնպես կպահանջվի բավարարել Ներքին էներգետիկ շուկայի պահանջները՝ խորը գիտակցելով Վրաստանի հետ միջսահմանային առևտրի նշանակությունը երկրի զարգացման համար: Ուստի, այս համատեքստում, անհրաժեշտ է մեկ անգամ ևս շեշտել Վրաստանի հետ միջսահմանային առևտրից բխող հիմնական օգուտները՝

- նվազագույն ծախսերով տարածաշրջանային ներդրման ծրագրի համակարգում, մասնավորապես հաշվի առնելով ներդրումների նկատմամբ Հայաստանի պահանջները, որոնք պայմանավորված են պահանջարկի աճով, հին ու ոչ արդյունավետ արտադրման և հաղորդման ենթակառուցվածքներով,
- քանի որ Հայաստանը համեմատաբար փոքր երկիր է, այն կարող է առաջնորդվել «արտադրության քանակի աճով պայմանավորված խնայողություն» տնտեսագիտական մոտեցմամբ՝ արտադրանքն ավելի մեծ շուկաներ արտահանելու միջոցով,
- էներգիայի արտահանումը և ներկրումը կարող է ապահովել զգալի հասույթ, և
- մատակարարման բարձր անվտանգություն և տնտեսական արդյունավետություն միջսահմանային առևտրի շրջանակներում:

Վրաստանի հետ միջսահմանային առևտրով պայմանավորված վերը թվարկված հիմնական օգուտները գիտակցելով՝ Հայաստանը պետք է ձեռնամուխ լինի անցումային ծրագրի մշակմանը և ընդունմանը՝ ԵՄ Ներքին էներգետիկ շուկային միանալու իր վերջնական նպատակին հասնելու համար: Տարածաշրջանում բազմաթիվ երկրներ են ցանկանում անդամակցել ԵՄ Ներքին էներգետիկ շուկային, սակայն յիարժեք անդամ

դառնալու համար կպահանջվի մի քանի տարի: Ուստի, արդեն հիմա Հայաստանը պետք է մշակի անցումային ծրագիր, որով կվերացվեն օրենսդրական, կարգավորման և շուկայի կառուցվածքի խոչընդոտները՝ առևտուրը փոխկապակցված իրականացնելու նպատակով, որը հնարավորություն կստեղծի մոտ և երկարատև ժամանակահատվածում տարածաշրջանի երկրների հետ ունենալ անաչառ և անկողմնակալ առևտրային հարաբերություններ:

Ի լրումն վերը նշվածի, անհրաժեշտ է նշել թափանցիկ գործելու կարևորությունը, որը հանդիսանում է ժամանակակից էներգետիկ շուկաների կարևորագույն հատկանիշը և մասնավոր ներդրումների ներգրավման միակ գրավականը: ԵՄ դիրեկտիվները տրամադրում են լիարժեքորեն թափանցիկ գործելու և էներգետիկ արդյունավետ համակարգ ունենալու բոլոր անհրաժեշտ հիմքերը: Թափանցիկ գործունեությունն ասելով անհրաժեշտ է հասկանալ ոչ միայն կարգավորող մարմնի կողմից տարբեր հաշվետվությունների հրապարակումը, այլ նաև՝ 1) արդյունավետ հանրային լուսամտերի իրականացումը՝ ներգրավելով սպառողների իրավունքները պաշտպանող կազմակերպություններին, և 2) օրենսդրական բոլոր մակարդակներում շուկային վերաբերող կանոնակարգերի ամբողջական թափանցիկության ապահովումը: Այս նպատակով անհրաժեշտ է վերանայել ստորև նշված համակարգերն առավել նպատակային դարձնելու համար՝

- կարգավորվող համակարգերը. որտե՞ղ է պետք իրականացնել կարգավորում,
- կարգավորման ոլորտը. ի՞նչը պետք է կարգավորվի,
- կարգավորման տեսակը. ինչպե՞ս պետք է կարգավորվի,
- կարգավորող մարմիններ. ո՞վ պետք է իրականացնի կարգավորում:

Հիմնվելով վերը նշված թիրախային գնահատման վրա՝ հնարավոր կլինի ստեղծել ԽԵԼԱՑԻ կարգավորում՝ առաջնորդվելով էներգետիկայի մասին հիմնական օրենքով և ճյուղային օրենսդրությամբ:

8.1 ՕՐԵՆՍԳՐԱԿԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ

ՀՀ էներգետիկ համակարգում առկա են բազմաթիվ օրենսդրական խոչընդոտներ, որոնք սահմանափակում են էներգետիկ համակարգի շահառուների կարողությունները՝ էլեկտրաէներգիան սպառողներին առավել հուսալի, արդյունավետ և մատչելի գնով մատակարարելու համար: Այսպես՝

- Թեև Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի (ԷՀՕ) պատասխանատվության շրջանակները՝ շահագործելու արտադրման և հաղորդման համակարգերը, սահմանվում են Էներգետիկայի մասին օրենքով, այնուհանդերձ, օրենքով այդ մարմնին չեն ընձեռվում անհրաժեշտ ամբողջական լիազորություններ: Անհրաժեշտ է ունենալ ճյուղային օրենսդրություն՝ մասնավորապես համապարփակ Ցանցային օրենսգիրք, որտեղ հստակ կամրագրվեն էներգետիկ համակարգում ԷՀՕ-ի և այլ

շահառուների դերը և պատասխանատվության շրջանակները՝ ապահովելու էներգետիկ համակարգի արդյունավետ շահագործումը, ներառյալ՝ միջազգային միջհամակարգային կապերը:

- Թեև էներգետիկայի մասին օրենքը սահմանում է արտահանողներին և ներկրողներին, այնուհանդերձ Հայաստանում չի գործում այնպիսի մի մարմին, որը կունենար էլեկտրաէներգիայի ներկրումն ու արտահանումը խթանելու լիազորություն, պարտականություններ, շարժառիթ, ինչպես նաև մարդկային և ֆինանսական բավարար միջոցներ: Այս համատեքստում, անհրաժեշտ է ունենալ ճյուղային օրենսդրություն, մասնավորապես՝ Առևտրային կամ Շուկայական օրենսգիրք, որտեղ ամրագրված կլինեն արդյունավետ առևտուր իրականացնելու մեխանիզմները, դրանց վարչարարությունը և խթանումը և Հայաստանի ներքում, և հարևան երկրների հետ: Նշված օրենսդրությունում նաև պետք է սահմանվեն հավասարակշռությունը և միջազգային միջհամակարգային կապերն ապահովող մեխանիզմներ, դրանց կիրառումը, ներառյալ՝ այսպես կոչված «խցանման» ղեկավարումը, երբ էլեկտրաէներգիայի մատակարարումը գերազանցում է տեղական կամ տարածաշրջանային բարձր լարման ցանցի հնարավորությունները: Ճյուղային օրենսդրությունը, հատկապես Հաշվառման կանոնները կարող է կազմել Ցանցային օրենսգրքի մաս: Իհարկե, հասկանալի է, որ Հայաստանի էներգետիկ համակարգի մեծ մասում արդեն գործում է հաշվառման համակարգ, սակայն այն պետք է կատարելագործվի՝ ապահովելու դրա համապատասխանությունը տարածաշրջանային համանման կանոնների հետ:
- Անհրաժեշտ է ունենալ ճյուղային օրենսդրություն կապված նոր կառուցապատումների հետ, որտեղ կամրագրվեն այնպիսի նորմեր, որոնք կհամապատասխանեն հարևան երկրներում/իրավահամակարգերում գործող նորմերին: Նշվածը վերաբերում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման անհրաժեշտությանը, վառելիքում ծծմբի պարունակության, ինչպես նաև խոշոր այրման կայանների արտանետումների սահմանափակումներին՝ հարևան երկրների հետ հավասար մակարդակում գործունեություն իրականացնելու նպատակով: Եվ ի վերջո, այս օրենսդրությունը պետք է համահունչ լինի ԵՄ Ներքին էներգետիկ շուկայի պահանջներին.
- Մրցակցության և պետական օժանդակության մասին օրենքները պետք է ձևավորվեն համապատասխանեցնելու հարևան իրավահամակարգերում գործող օրենսդրության հետ՝ հավասար մակարդակում գործունեություն իրականացնելու և ի վերջո ԵՄ Ներքին էներգետիկ շուկայի պահանջները բավարարելու նպատակով: Անհրաժեշտ է ունենալ ճյուղային օրենսդրություն՝ Հայաստանի էներգետիկ շուկան աստիճանաբար մրցակցության համար բացելու նպատակով: Անհրաժեշտ է ամրագրել հստակ վերջնաժամկետներ, որոնք համահունչ կլինեն հարևան իրավահամակարգերի ժամկետների հետ՝ հնարավորություն ընձեռելով կոնկրետ ժամանակահատվածում որոշակի մեծության սպառողներին ընտրել իրենց մատակարարին: Երբ շուկան բաց կլինի նաև փոքր սպառողների համար, անհրաժեշտ կլինի մշակել և ընդունել այնպիսի օրենսդրություն, որով կնախատեսվի «վերջին հանգույցի

մատակարարի» առկայությունը, կսահմանվեն խոցելի սպառողների սակագների սուբսիդավորման ասպեկտները և այդ սուբսիդավորումը ֆինանսավորելու թափանցիկ և համապատասխան մեխանիզմները, որոնք չեն ազդի շուկայի գնային ազդակների վրա.

- Էներգետիկայի մասին օրենքում կարգավորող մարմնի մասին հատվածը պետք է ձևափոխվի՝ համապատասխանեցնելու հարևան իրավահամակարգերում կարգավորող մարմնի վերաբերյալ գործող օրենսդրությանը և ի վերջո համապատասխանելու ԵՄ պահանջներն
- Էներգաարդյունավետության մասին օրենքը պետք է ձևափոխվի՝ ներառելով սարքավորումների պիտակավորման, շենքերի էներգաարդյունավետության նկատմամբ կիրառվող պահանջները՝ համապատասխանեցնելու հարևան իրավահամակարգերում գործող օրենսդրությանը և ի վերջո համապատասխանելու ԵՄ պահանջներին
- Էներգետիկայի մասին օրենքն ամբողջությամբ պետք է ձևափոխվի ճյուղային օրենսդրությանը համապատասխանեցնելու նպատակով:

Վերը նշվածին զուգահեռ՝ առաջնահերթության կարգով անհրաժեշտ է իրականացնել ստորև նշված գործողությունները՝

- Սահմանել բաշխման սակագներ, որը հանդիսանում է առաջին հիմնական քայլը դեպի բաց շուկա անգամ սպառողների շատ փոքր խմբի համար,

Սստեղծել Շուկայի օպերատոր, որը պատասխանատու կլինի առևտրային մեխանիզմները կազմակերպելու համար և ներքին, և տարածաշրջանային կտրվածքով: Շուկայի օպերատորի լիարժեք անկախությունը, անկողմնակալությունը և թափանցիկությունը ապահովելու համար ՀՀ կառավարությունը կարող է իր բաժնետոմսերը ուղղակիորեն փոխանցել շուկայի մասնակիցներին,
- Տարանջատել բաշխման համակարգը մատակարարման համակարգից և այդ կազմակերպությունների համար ստեղծել դիֆերենցված կարգավորում,
- Պարզեցնել արտահանման և ներկրման կանոնակարգումը,
- Մշակել շուկայի հիմնական կանոններ և սահմանել շուկայի բարեփոխումների անցումային փուլերը:

8.2 ՇՈՒԿԱՅԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Ստորև նկարագրված են ՀՀ էներգետիկ համակարգում առկա բազմաթիվ օրենսդրական խոչընդոտներ, որոնք սահմանափակում են էներգետիկ համակարգի

շահառուների կարողությունները՝ էլեկտրաէներգիան սպառողներին առավել հուսալի, արդյունավետ և մատչելի գնով մատակարարելու համար:

Էներգետիկ համակարգի արդյունավետությունը սահմանվում է հետևյալ երկու գործոններով՝ 1) էներգետիկ համակարգի շահագործում՝ էլեկտրաէներգիայի հուսալի մատակարարում ապահովելու համար, և 2) վերջնական սպառողի սակագնի նվազում կամ, առնվազն՝ սակագնի աճի նվազում: Սույն Հաշվետվության շրջանակներում քննարկվում է միայն երկրորդ գործոնն ապահովող էներգետիկ շուկայի արդյունավետության հետ կապված հարցերը: Թեև սույն Բաժինը ներկայացված է երկու մասով՝ *Ներքին շուկա* և *Միջառնամաշին առևտուր*, սակայն այն պետք է դիտարկել ամբողջական կտրվածքով, քանի որ բաժանումը պայմանական է և պահանջվող քայլերը պետք է դիտարկվեն միասնական կտրվածքով:

Հայաստանի արտադրման համակարգի կառուցվածքը (Գլուխ 3) բնորոշվում է որպես արտադրող կայանների բազմազանությամբ և գնային անհամաչափությամբ, որը բարդացնում է լիարժեք մրցակցային շուկա ունենալու հնարավորությունը՝ որպես համակարգի արդյունավետությունը բարձրացնող մեխանիզմ: Սակայն, սա չի նշանակում, որ շուկայի իրական մեխանիզմների կիրառումը չի կարողանա բարձրացնել այդ արդյունավետությունը: Ավելին, Վրաստանի հետ առևտուրը մեծապես կնպաստի արդյունավետության բարձրացմանը:

Հաշվի առնելով սպառողների վճարունակության մակարդակը՝ հարկ է նշել, որ վերջնական սպառողի սակագները բավականին բարձր են, ուստի անհրաժեշտ է կիրառել բոլոր հնարավոր միջոցները՝ բարձրացնելու դրանց ծախսերի արդյունավետությունը և թափանցիկությունը:

8.2.1 ՆԵՐՔԻՆ ԾՈՒԿԱ

8.2.1.1 ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՍԱԿԱԳՆԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Համակարգը, որը ներկայումս կիրառվում է պլանավորում իրականացնելու համար (մեկ տարվա կտրվածքով) կարող է առաջացնել լուրջ շեղումներ, քանի որ, որքան մեծ է պլանավորվող ժամանակահատվածը, այնքան փոքր է ճշտության աստիճանը: Ներկա ռեժիմում վճարումների շեղումները կապված են բացառապես տեղական սպառողների հետ, որոնք չեն հանդիսանում մեծածախ շուկայի մասնակիցներ, այսինքն՝ իրական մասնակիցները պատասխանատվություն չեն կրում:

Արտադրման երկդրույքային սակագինը (հզորություն և էլեկտրական էներգիա) իրականում հնարավորություն է տալիս ծածկել կայանների հաստատուն ծախսերը, իսկ էլեկտրաէներգիա արտադրող կայանի շահույթը կապված չէ իր արտադրանքի հետ: Այս համակարգն ապահովում է արտադրողների ֆունկցիոնալությունը, և տեղական սպառողի կողմից դրա դիմաց վճարումը արդարացված է: Սակայն, իրականում, այս մոտեցումն այդքան էլ լիարժեք չի գործում: Այսպես՝ Հրազդան ՉԷԿ-ի հին բլոկների ամբողջ շահույթը վերագրվում է հզորության դրույքին (շահույթը չպետք է կախված լինի կայանի արտադրանքից, այլ մշտական շահագործումից՝ սարքավորումները ծառայության մեջ անընդհատ պահելով), իսկ Երևանի ՉԷԿ-ի դեպքում շահույթն ամբողջովին վերագրվում է էլեկտրական էներգիայի դրույքին, 5-րդ Բլոկի դեպքում կիրառվում է միայն էլեկտրաէներգիային սակագինը: Ի տարբերություն 5-րդ Բլոկի՝ Երևանի ՉԷԿ-ը սվոփ

գործարքներից առաջացող շահույթը հաշվի է առնում տեղական սպառողների համար գինը հաշվարկելիս: Ուստի, մեծածախ շուկայի համար սակագնի հաշվարկի գործող մեթոդոլոգիաները պետք է վերանայվեն և մշակվեն Հայաստանի էներգետիկ շուկայի նոր մոդելի տեսանկյունից, երբ ընդարձակվում է առևտուրը Վրաստանի հետ և բացվում է շուկան:

Միաժամանակ, վերջնական սպառողի սակագնի կառուցվածքը շուկայի արդյունավետությունն ապահովող ևս մեկ խոչընդոտ է: Նույնիսկ բարձր լարման սպառողների համար չեն գործում հզորության կամ պիկային ժամանակահատվածի սահմանված սակագներ: Այդ պատճառով սպառողները պատասխանատվություն չեն կրում խոշոր արտադրողների հզորության սահմանված սակագնի համար: Ներկայումս գործող գիշերային և ցերեկային սակագները արդյունավետ չեն: Ամառվա ընթացքում գիշերային սակագինը ծածկում է պիկի որոշակի մասը, որը կոնցեպտուալ առումով անհավասարություն է սահմանում: Գիշերային/ցերեկային սակագնի ներկա հարաբերակցությունը՝ 12% բարձր լարման սպառողների համար և 26% միջին և ցածր լարման սպառողների համար չափազանց ցածր է արդյունավետ համարվելու համար: Մինևույն ժամանակ, կարևոր է բարձր և միջին լարման սպառողներին տրամադրել պիկային և գիշերային սակագներ, իսկ անցումային ժամանակահատվածում նրանց համար սահմանել հզորության սակագներ: Ընդհանուր առմամբ, անհրաժեշտ է պետական մասնակցությամբ ընկերություններին ապահովել բավարար հատուցադրույքով, առանց որի այդ ընկերությունները չեն կարող ներգրավել ներդրողներ և գոյատևել որևէ մրցունակ շուկայում:

8.2.1.2 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԳՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվի առնելով շուկայի փոքր չափսերը, Հայաստանի շուկան խիստ զգայուն է մեծ ծրագրերում կատարվող ներդրումների, դրանցում գործածվող ծավալների և տեղական սպառողների ֆինանսական բեռը ավելացնելու այլ ռիսկերի նկատմամբ: Վրաստանի հետ նոր գիծ ունենալու տարբերակի ընտրությունն ամբողջովին կախված է ներքին շուկայի վրա ազդեցության հաշվարկելուց: Ուստի, որոշումները կապված ներդրումային ծրագրերի հետ պետք է կայացվեն հիմք ընդունելով ներքին շուկայի փաստացի արդյունավետությունը:

8.2.1.3 ԿՈՆԿՐԵՏ ԴԵՊՐԵՐԻ ՀԱՄԱՐ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՍՏՈՒՄ

Վերջերս 5-րդ Բյուրը ստացավ այսպես կոչված «արտոնյալ մուտքի իրավունք» դեպի միջհամակարգային ցանց: Առաջին հայացքից այս որոշումը թվում է տրամաբանական՝ հաշվի առնելով ներքին շուկայում այս Բյուրի նկատմամբ առկա ցածր պահանջարկը: Այնուամենայնիվ, նույնիսկ, եթե չենք դիտարկում, որ այս որոշումը հանդիսանում է «Երրորդ կողմի հասանելիության» ընդհանուր ընդունված սկզբունքի խախտում (տես՝ վերը), կարող են լինել այնպիսի իրավիճակներ, երբ այս որոշումը կհակասի տեղական սպառողների շահերին: Այսպես՝ Հայաստանը ստանում է էլեկտրաէներգիայի ներկրման նպաստավոր պայմաններով առաջարկ, իսկ մինևույն ժամանակ 5-րդ Բյուրը որոշում է իրականացնել քիչ քանակով էլեկտրաէներգիայի արտահանում դեպի Վրաստան (սա կարող է լինել սկոպի գործարքից մնացած «ազատ» զազից արտադրված էլեկտրաէներգիան, որը կարող է էլեկտրաէներգիայի համար ապահովել մրցունակ գին): Արդյունքում, Հայաստանի շուկան հայտնվում է անբարենպաստ իրավիճակում, իսկ 5-րդ Բյուրը ստանում է լրացուցիչ շահույթ: Ներկայումս չկա այս հարցի իրավական որևէ կարգավորում, ինչը կարող է հանգեցնել լուրջ հետևանքների: Մովորաբար, շուկայի

մասնակիցները ստանում են հաղորդման ցանցից օգտվելու հավասար իրավունքներ, իսկ կուտակման (խցանման) դեպքում, իրականացվում են համապատասխան աճուրդներ:

8.2.1.4 ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԻՍՈՒՄ

Ներկայումս մեծածախ շուկայում տեղի ունեցող ցանկացած վթարի դեպքում, պատասխանատվությունն ընկնում է վերջնական սպառողների վրա: Շուկայի շահագործումն իրականացվում է փաստացի ռեժիմներով: Հայաստանի էլեկտրաէներգետիկ համակարգի վերջին ճգնաժամը ցույց տվեց, որ պատասխանատվությունը կիսելու ներկայումս գործող մեխանիզմներն արդյունավետ չեն: Ուստի, անհրաժեշտ է մշակել մեծածախ շուկայի մասնակիցների և վերջնական սպառողների միջև պատասխանատվության շրջանակները սահմանազատելու նոր մեխանիզմներ:

8.2.2 ՄԻՋՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Միջսահմանային առևտուրը Վրաստանի հետ միտված է բարձրացնելու ներքին շուկայի արդյունավետությունը: Արտադրական հզորությունների զարգացման տեսանկյունից, բազմաթիվ երկրներ առաջին հերթին հիմնվում են ինքնաբավարարման սկզբունքի վրա: Արտահանման/ներկրման գործառքները օգտագործվում են միայն ներքին շուկայի արդյունավետությունը բարձրացնելու համար:

8.2.2.1 ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐԿՐՈՒՄ

ՀՀ-ում ներկայումս գործող արտահանման կանոնի համաձայն, ամենաթանկ էլեկտրաէներգիան կարող է արտահանվել միայն տեղական պահանջարկը բավարարելուց հետո: Մա, իհարկե, վերաբերում է հաստատված սակագնին:

Հարկ է նշել, որ վերը նկարագրված սկզբունքն արդեն հնացած է: Հայաստանում, արտահանման տեսանկյունից արտադրության ամենաբարձր սակագինը 5-րդ Բլոկինն է (հին բլոկները հաշվի չեն առնվում, քանի որ դրանք արտահանման տեսանկյունից պահանջարկ չունեն և կարող են դիտարկվել որպես տեղական պահանջարկը բավարարելու նպատակով պահվող պահուստ): Ուստի, շուկայի ձևավորման փուլում անհրաժեշտ կլինի վերանայել վերը նկարագրված սկզբունքը, և էլեկտրաէներգիայի արտահանման ենթադրություններում այն կիրառել պարզապես որպես չափանիշ, որը, համենայն դեպս, չի բարձրացնի ներքին շուկայի համար արտադրության միջին գինը: Իսկ երկարաժամկետ ներդրումների լավ հնարավորությունների դեպքում, նշված սկզբունքը կարող է կիրառվել վերջնական սպառողների սակագնի հաշվարկման մեթոդոլոգիայում (նաև արտահանման դեպքում): Ընդհանուր առմամբ, անհրաժեշտ է վերանայել արտահանման և ներկրման կարգավորման օգտակարությունը (արդյունավետությունը)՝ որպես կարգավորման մեխանիզմ:

8.2.2.2 ՏԱՐԱՆԳՈՒՄ

Տարանցումը հնարավորություն է, որը նույնպես կարող է բարձրացնել Հայաստանի ներքին շուկայի արդյունավետության ցուցանիշները: Ավելի շատ տարանցման հնարավորություններ կարող են իրականություն դառնալ Հայաստանի և Թուրքիայի միջև խնդիրները լուծելուց հետո:

Հաշվի առնելով, որ տարածաշրջանային ընդհանուր շուկայի զարգացումը չի ակնկալվում, որ տեղի կունենա մոտ ապագայում, ուստի տարանցման համակարգը ձևավորելու նպատակով տեխնիկական և օրենսդրական դաշտը մշակելիս, անհրաժեշտ է առաջնորդվել, նախ և առաջ, ներքին շուկայի շահերով:

Ինչ վերաբերում է տարանցման սակագնին, ապա սկզբնական փուլում անհրաժեշտ է կենտրոնանալ պայմանագրով սահմանված սակագնի վրա, այսինքն՝ կիրառել երկրի ներսում հաղորդման համար սահմանված նույն սակագինը, քանի որ միջսահմանային առևտրի դեպքում, անցումային ժամանակաշրջանն իրականացվում է եվրոպական կարգավորման նորմերին համապատասխան: Հայաստանի դեպքում սա չափազանց կարևոր է տեղական սպառողների համար ցանցի ենթակառուցվածքներում ներդրումների զգայունության պատճառով:

Եթե իրականում նպատակավոր հնարավորություններ առաջանան էլեկտրաէներգիայի խոշոր տարանցիկ հոսքեր իրականացնելու համար, ապա Հայաստանի համար անհրաժեշտ կլինի հարևան երկրների հետ համագործակցային սկզբունքով նախատեսել միջհամակարգային կապերն արդիականացնելու ֆինանսավորման իրականացում:

Ստորև՝ **Աղյուսակ 5**-ում սխեմատիկ եղանակով ներկայացված են Հայաստանում առկա ռազմավարական մարտահրավերները և օրենսդրական խոչընդոտները, ինչպես նաև առաջարկություններ դրանց լուծման վերաբերյալ՝ հաշվի առնելով սույն Հաշվետվության նախորդ գլուխներում ներկայացված հարցերը: Իսկ առաջնահերթ կարևորության գործողությունները ներկայացված են նախորդ Գլուխ 8.1-ում:

ԱՂՅՈՒՄԱԿ 5 ՇՈՒԿԱՅԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ և ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ

Առաջադրանք	Հնարավոր բացասական ազդեցություններ կա իրավիճակի վրա	Օրենսդրական դաշտը և խոչընդոտները	Առաջարկություններ	Առավելություն	
				Ներքին շուկա	Միջ-սահմանային առևտուր
Շուկայի մասնակիցների սակագնի հաստատման մեթոդոլոգիան վերանայելու անհրաժեշտություն	<ul style="list-style-type: none"> Մեծ շեղումներ, քանի որ կիրառվում են միայն տարեկան պլանավորված քանակները Արտադրող կայանների համար անհավասար պայմաններ Արտոնյալ իրավունքի ձեռքբերման 	<ul style="list-style-type: none"> Անկատար մեթոդոլոգիա Երկդրույքային սակագնի միասնական մեթոդոլոգիայի բացակայություն 	Մեթոդոլոգիայի բարելավում՝ կիրառելով բեռի կորերը օրական կտրվածքով, արտահանման/ներկրման երկարաժամկետ պայմանագրերի բարելավում, ներառյալ սվոփ պայմանագրերը	✓	

	հնարավորություններ				
Արտադրողի կողմից հզորության կառավարում	Վճարումը հիմնված է հայտարարված հզորության վրա	Մեխանիզմ չկա	Համապատասխան մեխանիզմների ներդրում	✓	
Անցումը ժամային կտրվածքով շուկայի	Շահագործման փորձի պակաս	Չկա	<ul style="list-style-type: none"> ▪ Շուկայի նոր մոդելի մշակում ▪ Միջսահմանային առևտրի սկզբունքների ներդաշնակեցում 	✓	✓
Տեղական մեծածախ շուկայի արդյունավետություն	<p>Շահագործումն իրականացվում է փաստացի տվյալների հիման վրա, այդ պատճառով՝</p> <ul style="list-style-type: none"> ▪ շեղումների համար մասնակիցների կողմից պատասխանատվության բացակայություն և արդյունավետ շահագործման խթանիչ մեխանիզմների բացակայություն, ▪ տեղեկան սպառողների պաշտպանության բացակայություն, ▪ վերջնական սպառողների համար սակագնի լրացուցիչ աճի հնարավորություն 	<p>Խոչընդոտներն են՝</p> <ul style="list-style-type: none"> ▪ գործող մեթոդոլոգիայում շուկայի մասնակիցների պատասխանատվության շրջանակների սահմանազատման բացակայություն , ▪ գների քննարկումը թույլատրող մեխանիզմների բացակայություն 	Շուկայի նոր մոդելի ներդրում, ներառելով երկարաժամկետ երկկողմանի պայմանագրերը, հզորության շուկան, աճուրդային շուկաները և բալանսավորման մեխանիզմները	✓	
Շուկայի բացում	Ներքին շուկայում էլեկտրաէներգիայի գնման մոնոպոլ իրավունքի կիրառում	Միակ գնորդի մոդելը հանդիսանում է խոչընդոտ	<ul style="list-style-type: none"> ▪ Խոչոր սպառողների համար շուկա ուղիղ մուտք գործելու թույլտվություն ▪ Ցանկալի սակագին 	✓	

			ներդնելու մեթոդաբանություն		
Օպտիմալ կարգավարում Գրաֆիկների կազմում	Վերահսկող համակարգի բացակայություն	Կարգավորում չկա	Ներառել շուկայի կանոններում/Ցանցային օրենսգրքում	✓	✓
Շուկայի օպերատորի ստեղծում	Շուկայի համար անհրաժեշտ մի շարք գործառնությունների ձևադրում	<ul style="list-style-type: none"> ▪ Նախատեսված չէ շուկայի կառուցվածքում ▪ գործող Հաշվարկային կենտրոնի գործառնությունը կայանում է միայն հաշվիչ սարքերից ստացված տվյալների տրամադրումը 	Լիարժեք շուկայի օպերատորի ստեղծում, իրավունքների և պարտականությունների սահմանում	✓	✓
Շուկայի կանոններ և Ցանցային օրենսգրք	Չկա	Շուկան շահագործվում է միայն փաստացի ռեժիմով, սակագնի սահմանված վերին շեմով, պատասխանատվության շրջանակների բացակայությամբ	Շուկայի կանոնների և Ցանցային օրենսգրքի մշակում	✓	✓
Շուկայի մասնակիցների և վերջնական սպառողների միջև պատասխանատվության բաշխում	Ամբողջ պատասխանատվություն ընկած է վերջնական սպառողի վրա	Պատասխանատվությունը բաշխելու որևէ կարգավորում առկա չէ	Շուկայի նոր մոդելի մշակում՝ պատասխանատվության շրջանակների հստակ բաշխումով	✓	
Շուկայի վերահսկում	Միայն հայտարարություն	Շուկայի վերահսկման վերաբերյալ փաստաթղթերի բացակայություն	Վերահսկող և թափանցիկ համակարգի մշակում	✓	
Շուկայի կառուցվածք	Ոչ օպտիմալ միջսահմանային առևտրի հնարավորություններին շուկայի	Շուկայի չափազանց շատ կարգավորում	Անհրաժեշտ է ստեղծել <ul style="list-style-type: none"> ▪ ՇՕ 		✓

	նկատմամբ պարտականությունների բացակայության պատճառով		<ul style="list-style-type: none"> ▪ Թրեյդերներ ▪ Համախմբող կառույց (փոքր ՀԷԿ-երի համար) 		
Երրորդ կողմի հասանելիություն	Սույն մոդելի բացակայությամբ պայմանավորված՝ արտոնյալ իրավունքի հնարավորություն	Ազատ հասանելիության համար հաստատված ընթացակարգեր չկան	<ul style="list-style-type: none"> ▪ ԵՄ պահանջներին բավարարող ընթացակարգերի ստեղծում ▪ Թողունակության բաշխում 		✓
Շուկայի համակարգչային ծրագրի	Անհնար է ունենալ արդյունավետ շուկա առանց բազմաֆունկցիոնալ ծրագրի	Պահանջներ սահմանված չեն	Համակարգչային համապատասխան ծրագրի մշակում	✓	✓
Արտահանում	<ul style="list-style-type: none"> ▪ Արտահանումն իրականացվում է ներկայումս գործող օրենսդրության պահանջներին ոչ համապատասխան ▪ Մեծածախ շուկայի արդյունավետության վրա արտահանման ազդեցությունը որոշելու մեխանիզմների բացակայություն 	Արտահանման համար օգտագործվում է ամենաթանկ արտադրանքը	Անհրաժեշտ է փոխել արտահանման հնարավորության չափանիշը	✓	✓
Ներկրում	<ul style="list-style-type: none"> ▪ Վերջնական սպառողների սակագնում հաշվի չի առնված բարենպաստ ներկրումը ▪ Մեծածախ շուկայի արդյունավետության վրա ներկրման 	Կարգավորում չկա	Ներկրումով տեղական արտադրությունը փոխարինելու մեխանիզմների մշակում	✓	✓

	ազդեցությունը որոշելու մեխանիզմների բացակայություն				
Տարանցում	Անհամապատասխան գնային սկզբունքներ	Չկա իրավական կամ կարգավորման դաշտ	Ներքին շուկան չվնասելու տարանցման սկզբունքների ստեղծում	✓	✓
Ներդրումային ծրագրեր	Բացասական ազդեցության հնարավորություն տեղական սպառողների սակագների վրա	Համապարփակ գնահատման համար կարգավորման որևէ փաստաթուղթ առկա չէ	Ստեղծել նոր որոշումներ կայացնելու մեթոդոլոգիա	✓	
ԵՄ կանոնների կիրառում և միջսահմանային առևտրի իրականացում	Կիրառման սահմանափակ հնարավորություններ	Չկա գործողություններ ի համակարգված ծրագիր	Ներդաշնակեցում (այլ ոչ ամբողջովին կրկնօրինակում) Վրաստանի շուկայի կանոնների և ԵՄ դիրեկտիվների հետ		✓

9. ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ներկայումս Հայաստանի էներգետիկ համակարգը հանդիպում է բազմաթիվ մարտահրավերների, ինչին նպաստում են ներքին պահանջարկի աճը, հին ենթակառուցվածքները, անարդյունավետ շուկայի և սակագնի կառուցվածքը: Վրաստանի հետ առևտուր իրականացնելու համար առկա են բազմաթիվ հնարավորություններ, և մասնակցությունն այդ շուկայում կարող է տալ բազմաթիվ օգուտներ և արդյունավետորեն անդրադառնալ այդ մարտահրավերներին: Հայաստանի էլեկտրաէներգետիկական շուկայում բարեփոխումներ վերջին անգամ կատարվել են ավելի քան տասը տարի առաջ, և այդ համակարգի օրենսդրական դաշտը և կարգավորման նորմերը, որոնք անհրաժեշտ են ԵՄ Ներքին էներգետիկ շուկայի երկրների հետ առևտրային հարաբերություններ իրականացնելու համար, չեն համապատասխանում չափանիշներին: Ներքին շուկան և օրենսդրական դաշտը Վրաստանի հետ համահունչ դարձնելու համար համակարգված մոտեցումը և աստիճանաբար աճող մրցակցությունը Հայաստանի համար միանշանակ կլինի օգտակար և միևնույն ժամանակ կապահովի նաև անցումը դեպի ԵՄ Ներքին էներգետիկ շուկա:

Այս առումով, առաջարկվում է «ՎԵՐԲԵՌՆԵԼ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՇՈՒԿԱՆ»՝ ստեղծելով շուկայի նոր անցումային մոդել՝ այն աստիճանաբար մրցակցային դարձնելու սցենարով, շարժվել «կարգավորվող» համակարգից դեպի «ապակարգավորվող» համակարգ, հիմնվելով կարգավորման խթանիչ գործիքների վրա, մասնավորապես՝ սակագնի դեպքում առավելագույն գնի կամ առավելագույն հասույթի (price or revenue cap) հաշվարկման մեթոդի վրա: Նշվածի արդյունքում կպահանջվի փոփոխություններ իրականացնել ոչ միայն շուկայի կառուցվածքում, այլ նաև կարգավորման դաշտում և սակագնի կառուցվածքում, որը կնպաստի՝

- Պաշտպանել սպառողների շահերը և վերացնել անարդյունավետ մենաշնորհը,
- Ապահովել շուկայի մասնակիցների ֆինանսական կենսունակությունը,
- Ապահովել հավասար և անկողմնակալ պայմաններ համակարգի բոլոր մասնակիցների համար,
- Բարելավել մրցակցության պայմանները և ներգրավել մասնավոր ներդրումներ:

Շուկայի նոր կառուցվածքը պետք է համահունչ լինի տարածաշրջանի այլ երկրների շուկայի կառուցվածքների հետ՝ հավասար և անաչառ դաշտում գործելու նպատակով: Շուկայի անցումային կառուցվածքը մշակելուն պես, անհրաժեշտ է այն ներկայացնել ոլորտի բոլոր շահառուներին մեկնաբանությունների և առաջարկությունների համար, որից հետո վերանայել նախնական մշակված տարբերակը: Երբ շուկայի անցումային կառուցվածքը համաձայնեցվի բոլոր կողմերի միջև, անհրաժեշտ կլինի մշակել օրենսդրական դաշտը, կարգավորման նորմերը և ստանդարտները ներդաշնակեցնելու գործողությունների ծրագիրը, որը իրավական հիմք կստեղծի Վրաստանի հետ

միջսահմանային առևտուր իրականացնելու համար: Ներկա փուլում Հայաստանի և Վրաստանի շահառուներից կազմված աշխատանքային խմբի ջանքերով կձևափոխվի գործողությունների ծրագիրը՝ անաչառ, արդյունավետ և անկողմնակալ առևտուր իրականացնելու մեխանիզմ ստեղծելու նպատակով:

U.S. Agency for International Development

1300 Pennsylvania Avenue, NW

Washington, DC 20523

Tel: (202) 712-0000

Fax: (202) 216-3524

www.usaid.gov